



Կառուցողական կապիտալի հայեցակարգ.

Ներդրումներ, բարեվարքություն, ազդեցություն
2022 թվական, ապրիլ





Կառուցողական կապիտալի հայեցակարգ. ներդրումներ, բարեվարքություն, ազդեցություն

Oxford Analytica հիմնադրամից իրենց ներդրումն են ունեցել.

Նախագծի ղեկավար

Քեթրին Լ. Յանգ

Oxford Analytica
հիմնադրամի տնօրեն

Գլխավոր հեղինակ

Դոկտոր

Իզաբելլա Դ. Բան

Oxford Analytica հիմնադրամի
ավագ խորհրդատու,
Oxford Analytica միջազգային
խորհրդատվական խորհրդի
անդամ,
Օքսֆորդի համալսարանում
կառավարման և գլոբալ
էթիկայի գծով գիտաշխատող

Փորձագետներ

Պրոֆեսոր Դոն դե Ամիկիս

Ջորջթաունի համալսարանի իրավունքի
կենտրոնի իրավագիտության պրոֆեսոր,
Անդրազգային բիզնեսի և իրավունքի
կենտրոնի համաղեկավար,
Արտասահմանյան մասնավոր
ներդրումների ձեռնարկության նախկին
փոխնախագահ և գլխավոր
խորհրդական

Բեննեթ Ֆրիման

Bennett Freeman Associates-ի տնօրեն,
Chatham House-ի կրտսեր գիտաշխատող
Կենսակայունության հետազոտությունների
և քաղաքականության գծով նախկին ավագ
փոխնախագահ,
ԱՄՆ Պետդեպարտամենտի
Ժողովրդավարության, մարդու
իրավունքների և աշխատանքի հարցերով
քարտուղարի նախկին օգնական

Հանգ Թրեն

Ատլանտյան խորհրդի
տնտեսաաշխարհագրական
կենտրոնի ավագ գիտաշխատող,
Միջազգային ֆինանսների
ինստիտուտի նախկին գործադիր
տնօրեն,
Արժույթի միջազգային հիմնադրամի
Դրամական և կապիտալի շուկաների
վարչության նախկին փոխտնօրեն

Մարգարեթ Ուոչենֆիլդ

Themis Research-ի գլխավոր տնօրեն,
Մարդու իրավունքների և բիզնեսի
ինստիտուտի ավագ գիտաշխատող,
ՅՈՒՆԻՍԵֆ-ի և Միջազգային
ֆինանսական կորպորացիայի
նախկին ավագ խորհրդական

Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնից իրենց ներդրումն են ունեցել.

Կիմ Էրիկ Բեթչեր

Քաղաքականության և
ծրագրերի ուսուցման տնօրեն

Ֆրենկ Բրաուն

Հակակոռուպցիոն և
կառավարման կենտրոնի
տնօրեն

Էրիկ Հոնց

Հաշվետու ներդրումների
կենտրոնի տնօրեն

Աննա Կոմպանեկ

Համաշխարհային ծրագրերի
տնօրեն

Ռիտիկա Սինգ

Համաշխարհային ծրագրերի
պատասխանատու

Բովանդակություն

Ամփոփագիր	1
Մաս առաջին. Ներածություն	2
I. Կառուցողական կապիտալի անհրաժեշտությունը	3
II. Սույն հաշվետվության շրջանակը	5
Մաս երկրորդ. Կառուցողական կապիտալի անկյունաքարերը	7
I. Դրական խաղաղություն	8
II. Օրենքի գերակայություն	9
III. Հաշվետու ինստիտուտներ	11
IV. Քաղաքական և տնտեսական ազատություն	12
V. Սոցիալական և տնտեսական ներառականություն	13
VI. Արժեքներով առաջնորդվող մասնավոր հատված	14
Մաս երրորդ. Կառավարման բացերի հաղթահարումը. Ներդրումներ, բարեվարքություն և ազդեցություն	17
I. Ներդրումներ. մասնավոր կապիտալի հոսքերը դեպի զարգացող երկրներ	17
Ա. Ընդհանուր ակնարկ	17
Բ. Քայքայող կապիտալ	18
Գ. Կառուցողական կապիտալ	20
Դ. Կառուցողական կապիտալը խրախուսելու քաղաքական միջոցները	21
II. Բարեվարքություն. հակակոռուպցիոն կանոններ, ինստիտուտներ և հաշվետվողականության կառուցակարգեր	23
Ա. Ընդհանուր ակնարկ	23
Բ. Հակակոռուպցիոն նորմեր և ինստիտուցիոնալ շրջանակներ	24
Գ. Հակակոռուպցիոն հաշվետվողականության կառուցակարգեր	25
III. Ազդեցություն. կապեր ներդրումների և բարեվարքության հետ	26
Ա. Ընդհանուր ակնարկ	26
Բ. Պատկերացումներ մասնավոր հատվածի ազդեցության վերաբերյալ	27
Գ. Պատկերացումներ զարգացման և ֆինանսական հաստատությունների ազդեցության վերաբերյալ	29

Մաս չորրորդ. Աջակցող միտումները պատասխանատու բիզնեսում և ներդրումներում	34
I. Համատեքստ	34
II. Բիզնեսը և մարդու իրավունքները	35
III. Պատշաճ շրջահայացության նախաձեռնություններ	37
IV. Պատասխանատու ներդրումներ և ESG	39
Ա. Ընդհանուր ակնարկ	39
Բ. Ընկերության ներգրավվածություն	40
Գ. ESG չափորոշիչներ և հաշվետվողականություն	41
V. ԿՁՆ 16 և տրանսֆորմացիոն կառավարում	42
Մաս հինգերորդ. Կառուցողական կապիտալի հայեցակարգի առաջխաղացումը	44
I. Կառուցողական կապիտալի վերաբերյալ իրազեկում	44
II. Կառուցողական կապիտալի խթանմանը միտված գործողություններ	45
III. Շահակիցներին ներգրավման գործարար հնարավորություններ	48
Ա. Կորպորատիվ նպատակի ազդեցությունը	48
Բ. Խթաններ ESG ներդրումների համար	49
Գ. Քաղաքացիական հասարակության և գործարարության «ընդհանուր տարածք»	50
Մաս վեցերորդ. Եզրակացություն. փաստարկներ կառուցողական կապիտալի օգտին	51
ՀՂՈՒՄՆԵՐ	54

Ամփոփագիր

Կառուցողական կապիտալի հայեցակարգը շուկայական կողմնորոշում ունեցող մոտեցում է, որն աջակցում է մասնավոր կապիտալի հոսքերին ու օտարերկրյա ուղղակի ներդրումներին և հիմնվում համակարգային բազմաչափ հենքի վրա:

Հայեցակարգը նպատակ ունի զսպել քայքայող կապիտալի բացասական հետևանքները և ամրապնդել կառուցողական կապիտալի դրական նախադրյալները: Այն որպես արդար, ներառական և կայուն տնտեսությունների հիմք պաշտպանում է թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրենքի գերակայությունը: Նման Հայեցակարգի անհրաժեշտությունը հիմնված է Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE) փորձի վրա: Վերջինս բարեկեցություն և ժողովրդավարություն կառուցելու նպատակով աշխատում է զարգացող շուկաների գործարար կազմակերպությունների և համայնքների հետ [1]:

Քայքայող կապիտալ

Կապիտալի ոչ թափանցիկ հոսքեր, որոնք չունեն շուկայական կողմնորոշում, սրացող երկրների տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումների վրա ազդելու համար շահագործում են կառավարման բացերը:

Կառուցողական կապիտալ

Լավ կառավարվող ներդրումային հոսքեր, որոնք ծառայում են թափանցիկ, շուկայական կողմնորոշում ունեցող և հաշվետու նպատակներին ինչպես ֆինանսավորման աղբյուրում, այնպես էլ նպատակակետում:

CIPE-ը կապիտալի հոսքերի այս երկու հակադիր հայեցակարգերը մշակել է մի շարք ինստիտուտներում լավ կառավարումը խրախուսելու և բիզնեսի ու ձեռներեցության համար նպաստավոր միջավայր ձևավորելու նպատակով: Բարեվարքության ամուր հիմքը կենսունակ մասնավոր հատվածի մասնակցությամբ կաջակցի կառուցողական ազդեցություն ունեցող ներդրումներին: Տեղական տնտեսությունները կշահեն նոր հնարավորություններից, այդ թվում՝ համաշխարհային արժեքային շղթաների հետ կապերի միջոցով: Ավելին, նման գործոնները կկանգնեցնեն նաև քայքայիչ ազդեցություն ունեցող ներդրումների հոսքը:

CIPE-ը համագործակցում է Մեծ Բրիտանիայի Oxford Analytica հիմնադրամի հետ՝ սահմանելու, թե կառուցողական կապիտալի հոսքերը խթանելու համար երկրներն ինչպես կարող են մշակել արդյունավետ քաղաքականության շրջանակները [2]: Այս զեկույցը սահմանում է կառուցողական կապիտալի մի շարք անկյունաքարեր, որոնք ստեղծում են ինչպես նորմատիվ, այնպես էլ գործնական հիմքեր: Զեկույցը ներդրումների, բարեվարքության և ազդեցության միջև փոխադարձ կապն ամրապնդելու միջոցով առաջարկում է կառավարման բացերը վերացնելու մոդել: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ այս մոդելը կարող է ուժեղացնել ներառական տնտեսությունների կառուցմանը միտված դրական ֆինանսական հոսքերը: Վերանայվում են պատասխանատու բիզնեսին և ներդրումներին աջակցող միտումները, տարբեր մակարդակներում ուրվագծվում են գործողության հնարավոր ուղիները: Ընդհանուր առմամբ, *Կառուցողական կապիտալի հայեցակարգը* կարող է ծառայել որպես շահակիցների իրազեկման և ներգրավվածության խթան: Այն ձևավորվել է համաշխարհային խորը մարտահրավերների ժամանակահատվածում՝ ճկուն և արդար վերականգնմանը միտված առաջարկներով օգնելու նպատակով:

Մաս առաջին. Ներածություն

Կառուցողական կապիտալի հայեցակարգը ներկայացնում է մասնավոր կապիտալի հոսքերին և օտարերկրյա ուղղակի ներդրումներին աջակցելու նորարարական մոտեցում, որը հիմնված է համակարգային բարեվարքության և համապարփակ հենքի վրա: Հայեցակարգը՝ որպես արդար, ներառական և կայուն տնտեսությունների հիմք, պաշտպանում է թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրենքի գերակայությունը:

Շատ կարևոր է, որ լավ կառավարվող ֆինանսական հոսքերի նախադրյալներն ամրապնդվեն ինչպես դրանց սկզբնաղբյուրում, այնպես էլ նպատակակետում: Տեղական մակարդակում հաջող իրականացումը կախված է ներդրումների, բարեվարքության և ազդեցության միջև փոխադարձ կապերի ամրապնդումից: Հայեցակարգը հիմնվում է կենսունակ և պատասխանատու մասնավոր հատվածի ներդրման, ինչպես նաև շահակիցների հետ համագործակցության վրա: Այն արդիական է բոլոր երկրների, ինստիտուտների և գործարար համայնքների համար: Հիմնված լինելով վստահության նկատմամբ նորացված հանձնառության վրա՝ նման ռազմավարությունը կխթանի կառուցողական ներդրումները և կկանգնեցնի քայքայող ներդրումների հոսքը: Ինչպես նշվում է ստորև, համաշխարհային մարտահրավերները կառուցողական կապիտալի անհրաժեշտությունը դարձնում են առավել հրատապ: Հանրային առողջության, տնտեսական կայունության և քաղաքական համախմբված ճգնաժամերը լուրջ մարտահրավերներ են ստեղծում լավ կառավարման համար:

Կառուցողական կապիտալը ֆինանսական հոսքեր են, որոնք լավ կառավարվում են ինչպես ֆինանսավորման աղբյուրում, այնպես էլ նպատակակետում: Այն աջակցում է շուկաներին և օրենքի գերակայությանը, խթանում է թափանցիկությունը և բարելավում կառավարումը՝ կառավարությունների վրա դնելով մասնավոր հատվածի համար հավասար պայմաններ ապահովելու պատասխանատվությունը: Հաճախ նման օգուտներից են զուտ շուկայական ներդրումների դրական արտաքին ազդեցությունները: Կառուցողական ներդրումները միտված են դեպի կայուն և արդար տնտեսական աճին աջակցող ընկերությունները և տեղական շուկաները: Ընդհանուր առմամբ, դրանք կարող են մեծացնել եկամտաբերությունը և ապագա գործարար հնարավորությունները: Բեկումնային պահին կառուցողական կապիտալը կարող է հանգեցնել ներդրումների և գործարար միջավայրի բարելավման պարբերաշրջանի: Դա նաև աջակցում է կայուն շուկայական ինստիտուտների և լավ կառավարման զարգացմանը: Գործարար վարքագծի համաշխարհային չափորոշիչների բարձրացմամբ՝ որոշում կայացնողները, ովքեր վերահսկում են օրենքի գերակայության, խիստ հակակոռուպցիոն վերահսկողության և թափանցիկ աղբյուրներից բխող կապիտալ ներդրումները, ավելի ու ավելի դժկամորեն են ներդրումներ կատարում ոչ այնքան բաց շուկաներում:

Մասնավոր ձեռնարկատիրության և շուկայական բարեփոխումների միջոցով՝ զարգացող և սահմանային շուկաներում ժողովրդավարության ամրապնդման նպատակով Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնը (CIPE) հիմնականում համագործակցում է գործարար կազմակերպությունների և տնտեսական քաղաքականության վերլուծական կենտրոնների հետ [3]: Նման աշխատանքը բիզնեսի և ձեռներեցության համար բարենպաստ միջավայր ստեղծելու և տեղական տնտեսություններ կառուցողական կապիտալ ներգրավելուն և համաշխարհային արժեքային շղթաներին միանալուն աջակցելու նպատակով կենտրոնանում է ամուրի նստիտուտների կառուցման վրա: CIPE-ը և Oxford Analytica (OA) հիմնադրամը միավորեցին իրենց ուժերը՝ կառուցողական կապիտալի հոսքերը խրախուսելու նպատակով պետական արդյունավետ քաղաքականության եղանակների մշակման խնդիրը լուծելու համար: Սոցիալական, բնապահպանական, տնտեսական կամ քաղաքական դրական ազդեցությամբ նախագծերին աջակցելու նպատակով OA հիմնադրամն իրականացնում է հետազոտություններ և վերլուծություններ [4]: Հիմնադրամը հիմնվում է այնպիսի թեմաների փորձագիտական ցանցի վրա, ինչպիսիք են գլոբալ կառավարումը, ներդրումային օրենսդրությունը, տնտեսագիտությունը, զարգացման ֆինանսները, կենսակայունությունը և կորպորատիվ պատասխանատվությունը:

I. Կառուցողական կապիտալի անհրաժեշտությունը

Կառուցողական կապիտալի հայեցակարգի անհրաժեշտությունը մեծանում է ընթացիկ ռիսկերի, ինչպես նաև հնարավորությունների պատճառով: Համընկնող ճգնաժամերի ժամանակաշրջանում կարող է օգնել արդյոք կառուցողական կապիտալի խթանումը կայուն վերականգնմանն ամբողջ աշխարհում: Ձևավորվող համատեքստում դիտարկվում են հետևյալ թեմաները:

Կառուցողական կապիտալի աջակցմանը միտված ջանքերի հիմնական շարժիչ ուժը քայքայող կապիտալը զսպելու անհրաժեշտությունն է: CIPE-ի կողմից մշակված նկարագրությունները վկայում են ազդեցությունների խիստ հակադրության մասին: Ավելին, քայքայող կապիտալի համատարած ազդեցությունը կարող է հանգեցնել կառուցողական կապիտալի պահպանման պայմանների հետագա վատթարացմանը: COVID-19 ճգնաժամը խորացրեց երկարաժամկետ մարտահրավերները բարեվարքության և հակակոռուպցիոն ջանքերում: Բացի այդ, ներդրումային տարբեր աղբյուրների կրճատման պայմաններում քայքայող կապիտալը կարող է գտնել ներթափանցման նոր ուղիներ, ինչը հետագայում կարող է խոչընդոտել արդյունավետ կառավարման ինստիտուտներին:

Քայքայող կապիտալն անդրսահմանային ֆինանսավորում է, լինի դա պետական, թե մասնավոր, որին հատուկ չեն թափանցիկությունը, հաշվետվողականությունը և շուկայական կողմնորոշումը: Դա կառուցողական կապիտալի հակադարձ հայեցակարգն է: Ներդրումների այս տեսակը խաթարում է վստահությունն ինստիտուտների նկատմամբ, թուլացնում է օրենքի գերակայությունը, խթանում է ոչ թափանցիկ գործելաոճը և կարող է մենաշնորհային իշխանություն գործադրել: Նման գործարքները բացահայտելու համար CIPE-ը մշակել է քայքայող կապիտալի հայեցակարգը: Դրանք ներառում են մենատիրական ռեժիմներից դեպի զարգացող շուկաներ ուղղված բազմաթիվ հոսքերը: Ընդհանուր առմամբ, քայքայող կապիտալի ներդրումները հիմնարար սպառնալիք են ժողովրդավարության և ներառական շուկաների համար: Ներդրումները, որոնք ծագումով թափանցիկ չեն, պայմանավորված են քաղաքական ճնշումներով կամ չեն վերահսկվում, հաճախ խաթարում են կառուցողական կապիտալի ներգրավմանը միտված շուկայական ինստիտուտները: Երբ շուկայում գերակշռում է քայքայող կապիտալի որոշակի մակարդակ, դա կարող է հանգեցնել էնդեմիկ կոռուպցիայի կործանարար պարբերաշրջանի և ինստիտուտների թուլացման: Սա ստեղծում է թունավոր գործարար միջավայր, որը խեղդում է տեղական բիզնեսի նորարարությունը, նվազեցնում է հավասարությունը և խոչընդոտում զարգացման հեռանկարները:

Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել չորս դրական զարգացումներ. համաշխարհային կտրվածքով ջանքեր են գործադրվում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Կայուն զարգացման նպատակներին (ԿՂՆ) մինչև 2030թ. հասնելու ուղղությամբ: Ինչպես պարզաբանվում է այս զեկույցում, CIPE-ը ԿՂՆ 16-ը դիտարկում է որպես գերակա նպատակ, որն էական նշանակություն ունի այս օրակարգին հասնելու համար: *Կառուցողական կապիտալի անկյունաքարերը*, օրինակ, ամրապնդում են ԿՂՆ 16-ը և դրա կենտրոնացումը խաղաղության, արդարության և ամուր ինստիտուտների վրա: Չնայած առկա անհաջողություններին, պետական և մասնավոր աղբյուրներից կայուն զարգացումը ֆինանսավորելու հետ մեկտեղ՝ նպատակներին հասնելու շարժումը կշարունակվի: Կառուցողական կապիտալի հետ միավորումը կարող է բացահայտել նոր հնարավորություններ:

Պատասխանատու բիզնեսին և ներդրումներին աջակցող միտումները պահպանվում են և շատ առումներով արագացել են: Սա լավ ազդակ է CIPE-ի ռազմավարությունների համար, որոնք կենտրոնանում են ներառական հասարակություններ կառուցելու գործում բիզնեսի դրական դերի վրա: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում բնապահպանական, սոցիալական և կառավարման գործոնների վրա կենտրոնացող ESG ներդրումների աճը: Այն փոխակերպում է կորպորատիվ կառավարումը, ինչպես նաև բիզնես գործառնությունները ողջ աշխարհում: Հեղափոխել է նաև ռիսկերի վերլուծությունը և բնապահպանական ու սոցիալական ոլորտներում ազդեցության գնահատումը: Մասշտաբների մասին պատկերացում կազմելու համար հարկ է նշել, որ 2021թ.-ին ESG ֆոնդեր է մուտքագրվել 120 միլիարդ դոլար՝ կրկնապատկելով 2020թ.-ի 51,5 միլիարդը: Կայուն ավելի լայն ներդրումային ակտիվները ներառող գնահատումները հասնում են 35,3 տրիլիոն դոլարի [5]: Կառուցողական կապիտալը կարելի է խթանել ոչ միայն որպես ESG գործոնները, այլ նաև ESG ներդրումների հիմքում ընկած պայմանները տարբեր երկրներում ուժեղացնելու միջոց:

Ինչ վերաբերում է ժողովրդավարությանը, ազատությանը և օրենքի գերակայությանը, ապա, իրոք, ներկայիս միջազգային ցուցանիշները բոլորն էլ շարժվում են նվազման ուղղությամբ: Կրկին, *Կառուցողական կապիտալի հայեցակարգը* կարող է արդիական լինել նման սկզբունքների ամրապնդման համար, հատկապես զարգացող շուկաների տեղական մակարդակում: CIPE-ը նաև հիմնվում է գլոբալ կառավարման ինստիտուտների հետ համագործակցության հզոր փորձի վրա:

Վերջապես, խորությամբ վերաիմաստավորվում է կապիտալիստական համակարգը: Փոխվում են բիզնեսի, կառավարության և հասարակության հարաբերությունները: Առանցքային թեմա է դառնում ընդհանուր արժեքների ամրապնդումը, ընդհանուր խնդիրների լուծումը և վստահության վերականգնումը: CIPE-ը լավ հնարավորություններ ունի նպաստելու նման բանավեճին, այդ թվում՝ կապիտալի հոսքերի դրական ազդեցության ուժեղացմանն ուղղված այս աշխատանքի միջոցով:

II. Սույն հաշվետվության շրջանակը

Կառուցողական կապիտալի հայեցակարգը կազմված է վեց մասից, ներառյալ այս Ներածությունը: **Երկրորդ մասը** նույնականացնում է կառուցողական կապիտալի *վեց անկյունաքարերը*¹ ստեղծելով ինչպես նորմատիվ, այնպես էլ գործնական հիմքեր: Անկյունաքարերն են դրական խաղաղությունը, օրենքի գերակայությունը, հաշվետու ինստիտուտները, քաղաքական և տնտեսական ազատությունը, սոցիալական և տնտեսական ներառականությունը, արժեքներով առաջնորդվող մասնավոր հատվածը: Այս Անկյունաքարերից յուրաքանչյուրի ամրապնդմանն ուղղված համաձայնեցված գործողությունները կաջակցեն կառուցողական կապիտալի հոսքերին և կսահմանափակեն քայքայող կապիտալի հոսքերը:

Երրորդ մասը կենտրոնանում է կառավարման բացերի վերացման վրա և ինտեգրում է «ներդրումներ», «ամբողջականություն» և «ազդեցություն» հասկացությունները: Այն առաջարկում է փորձագիտական ակնարկներ այս թեմաներից յուրաքանչյուրի վերաբերյալ՝ ներառյալ կապիտալի հոսքերը, հակակոռուպցիոն հաշվետվողականության կառուցակարգերը և տնտեսական, սոցիալական ու կենսակայունության ազդեցության գնահատման նորարարական մոտեցումները: Թե՛ պետական և թե՛ մասնավոր հատվածներին առնչվող նման կապերի դինամիկան կարող է օգնել սահմանել քաղաքականության վերաբերյալ պատասխան միջոցներ կամ այլ գործողություններ: Ներդրումների, բարեվարքության և ազդեցության այս համալիր մոտեցումը կարող է կիրառվել *Հայեցակարգի* բազմաթիվ ոլորտներում:

Չորրորդ մասում դիտարկվում են պատասխանատու բիզնեսին և ներդրումներին՝ ներառյալ կայունությանն աջակցող միտումները: Այն անդրադառնում է բիզնեսին և մարդու իրավունքներին, պատշաճ շրջահայացությանը, ESG չափանիշներին և հաշվետվություններին, ինչպես նաև շահակիցների ներգրավման նոր ձևերին: Տարբեր ոլորտներում և երկրներում ընկերությունները վերանայում են իրենց կառավարումն ու ռազմավարությունը և ազդում բիզնեսի ավելի լայն էկոհամակարգի վրա: Նման միտումները կառուցողական կապիտալի համար նախադրյալների ապահովման գործում ամրապնդում են արժեքներով առաջնորդվող և կենսունակ գործարար համայնքի առանցքային դերը:

Հինգերորդ մասում քննարկվում է տարբեր շահակիցների՝ ներառյալ ընկերությունների, պետական գերատեսչությունների, անկախ գործարար ասոցիացիաների, ներդրումային մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից կառուցողական կապիտալի առաջխաղացումը: Տեղական և միջազգային մակարդակներում հետագա հետազոտությունների, ինչպես նաև գործնական ռազմավարությունների բացահայտման համար կան համագործակցության նոր լայն հնարավորություններ:

Վերջապես, **վեցերորդ մասն** ամրապնդող թեմաների վերաբերյալ առաջարկում է ամփոփիչ դիտարկումներ: Սույն զեկույցի հիմքում ընկած հայեցակարգերի վերաբերյալ իրազեկության բարձրացումը և կոնկրետ գործողությունների նախաձեռնումը կապահովեն համոզիչ փաստարկներ: Ավելին, 2022թ.-ի ապրիլին CIPЕ-ը գործարկել է Հաշվետու ներդրումների նոր կենտրոն: Մենք ունենք բոլոր հնարավորություններն այս աշխատանքը շարունակելու և *Կառուցողական կապիտալի հայեցակարգի* իրագործումը խթանելու համար:

Մաս երկրորդ. Կառուցողական կապիտալի անկյունաքարերը

Կառուցողական կապիտալի հայեցակարգը կառուցված է վեց կանոնների վրա, որոնք ապահովում են ինչպես իրավական, այնպես էլ գործնական հիմքեր: Դրանք կոչվում են **կառուցողական կապիտալի անկյունաքարեր**: Ձևավորված լինելով քաղաքականությունների գնահատման և գործնական փորձի վրա՝ **անկյունաքարերը** հիմնվում են ամբողջ աշխարհի գործարար համայնքների հետ համագործակցության շրջանակներում CIPE-ի կողմից մշակված ռազմավարությունների վրա:

Հարցը, թե արդյոք կապիտալի կառուցողական կամ քայքայող հոսքերը գերակշռում են համաշխարհային ներդրումներում, ունի խորը տնտեսական, քաղաքական և սոցիալական հետևանքներ: Պարզ ասած, անկյունաքարերի հետ համընկնող կապիտալի հոսքերը համարվում են կառուցողական, մինչդեռ կապիտալի հոսքերը, որոնք թուլացնում են դրանք, համարվում են քայքայող: **Անկյունաքարերը** տարբեր շահակիցների համար՝ ներառյալ զարգացման գործակալությունները, գործարար ասոցիացիաները և քաղաքացիական հասարակության խմբերը, կարող են ծառայել որպես հենակետ: Տեղական և գլոբալ մակարդակներում դրանք վերաբերում են ներդրումների, բարեվարքության և ազդեցության բազմաթիվ կողմերին: Իրապես, շինարարության հետ համեմատության փոխաբերական իմաստով՝ վեց **անկյունաքարերի** հավաքածուն կարող է աջակցել ժողովրդավարության և շուկաների կառուցվածքային բարեվարքությանը:

Կառուցողական կապիտալի անկյունաքարերը ներառում են դրական խաղաղությունը, օրենքի գերակայությունը, հաշվետու ինստիտուտները, քաղաքական և տնտեսական ազատությունը, սոցիալական և տնտեսական ներառականությունն ու արժեքներով առաջնորդվող մասնավոր հատվածը: **Կառուցողական կապիտալի հայեցակարգի** համար հատուկ նշանակություն ունի ԿԶՆ 16-ը [6]: Դրա նպատակն է «Կայուն զարգացման համար աջակցել խաղաղ և ներառական հասարակություններին, ապահովել արդարադատության հասանելիությունը բոլորի համար և բոլոր մակարդակներում կառուցել արդյունավետ, հաշվետու և ներառական ինստիտուտներ»: Այսպիսով, այն հեշտությամբ ամրապնդում է **կառուցողական կապիտալի բոլոր անկյունաքարերը**: CIPE-ն ընդունում է, որ ԿԶՆ 16-ի ուժը կայանում է բոլոր ԿԶՆ-ների նվաճման հարցում նրա խթանող դերակատարման մեջ: Այս նպատակի ուղղությամբ հաջող գործողությունները կապված են նաև ԿԶՆ 17-ի հետ. «Ամրապնդել իրագործման միջոցները և աշխուժացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման»:

ԿԶՆ 16-ը հաճախ ձևակերպվում է որպես «ԿԶՆ 16+»՝ հիմնվելով այն համոզման վրա, որ խաղաղությունը, արդարությունը և ներառականությունը պետք է ինտեգրվեն ՄԱԿ-ի Կայուն զարգացման օրակարգում: Օրինակ, «Խաղաղ, արդար և ներառական հասարակության պիոներներ» խումբը, որը ներառում է միջազգային գործակալություններ, պետություններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, Օրակարգն իրագործելու համար մշակել է ԿԶՆ 16+ ճանապարհային քարտեզը [7]: Դրանց՝ վասաների կանխարգելման, ինստիտուցիոնալ փոփոխությունների, ներգրավման և հզորացման խաչաձև ռազմավարությունները համահունչ են բազմաթիվ համայնքներում CIPE-ի կողմից կիրառվող մոտեցումներին: Նմանապես, առաջնահերթ խնդիր է ֆինանսական բազմաթիվ աղբյուրների հավաքագրումը: «Պիոներների»

ընկերակցությունը համոզիչ փաստարկներ է ապահովում ԿԶՆ 16+-ում ներդրումներ կատարելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել խոցելի երկրների կարիքներին:

Տեղական և գլոբալ մակարդակներում ԿԶՆ 16-ի առաջխաղացման գործում կենսական դեր է խաղում մասնավոր հատվածը: Նման ներգրավվածության օրինակները բերված են պատասխանատու բիզնեսի վերաբերյալ սույն Ձեկույցի Չորրորդ մասում:

I. Դրական խաղաղություն

Խաղաղությունն անհրաժեշտ է մարդկային անվտանգության և ծաղկման համար: Այն բարգավաճող հասարակությունների և տնտեսությունների հիմքն է: Թեև խաղաղության մեկ միասնական սահմանում չկա, անշուշտ այն ավելին է, քան պարզապես հակամարտության բացակայությունը: Ժամանակակից հակամարտությունների դինամիկան բարդ է [8]: Այնուամենայնիվ, խաղաղության և զարգացման հզոր կապը վերափոխում է քաղաքական, տնտեսական և մարդկային անվտանգության քաղաքականությունները: ՄԱԿ-ը հաստատում է խաղաղության կենսական դերը բոլոր ԿԶՆ-ների նվաճման գործում՝ ընդգծելով արդար և ներառական հասարակությունների հետ կապը [9]: Համաշխարհային տնտեսական ինստիտուտները, օրինակ, Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), մասնավոր հատվածը դիտարկում են որպես խաղաղության և բարգավաճման էական շարժիչ նույնիսկ աշխարհի ամենադժվար շուկաներում [10]:

Կառուցողական կապիտալի հայեցակարգի այս առաջին անկյունաքարն ուղղակիորեն հիշատակվում է որպես «դրական խաղաղություն», ինչն արտացոլում է Տնտեսության և խաղաղության ինստիտուտի (Institute of Economics and Peace, IEP) հեղինակավոր հետազոտությունը [11]: Ամեն տարի IEP-ը հրապարակում է Խաղաղության համաշխարհային դասիչը (Global Peace Index, GPI), որն ըստ խաղաղության մակարդակի՝ դասակարգման է ենթարկում 163 անկախ պետությունները և տարածքները: Բացի այդ, IEP-ը վերլուծում է դրական խաղաղությունը, որը սահմանվում է որպես «հարաբերություններ, ինստիտուտներ և կառույցներ, որոնք ձևավորում և պահպանում են խաղաղ հասարակությունները» [12]: Դրական խաղաղության դասիչում (Positive Peace Index, PPI) դիտարկվող գործոնները հանգեցնում են այլ ցանկալի սոցիալ-տնտեսական արդյունքների և նպաստում կենսակայունությանը:

Կառուցողական կապիտալի նախադրյալների ամրապնդմանը կարող են ծառայել դրական խաղաղության ութ սյուները.

1. Լավ գործող կառավարություն,
2. Առողջ գործարար միջավայր,
3. Այլոց իրավունքների ճանաչում,
4. Լավ հարաբերություններ հարևանների հետ,
5. Տեղեկատվության ազատ հոսքեր,
6. Մարդկային կապիտալի բարձր մակարդակ,
7. Կոռուպցիայի ցածր մակարդակ,
8. Ռեսուրսների արդար բաշխում:

Ավելին, բիզնեսի մրցունակությունը և տնտեսական արտադրողականությունն ասոցացվում են ամենախաղաղ երկրների հետ: Թեև դրական խաղաղության հայեցակարգը՝ որպես կայունության և բարգավաճման հիմք, *կառուցողական կապիտալի անկյունաքարն է*, այն նաև առաջարկում է պատկերացումներ գործարար միջավայրի և ներդրումային որոշումների վերաբերյալ:

GPI-ի 2021թ.-ի բացահայտումները պատկերում են մի աշխարհ, որտեղ «վերջին տասնամյակում ի հայտ եկած հակամարտությունները և ճգնաժամերը սկսել են թուլանալ, սակայն COVID-19 համաճարակի և խոշոր տերություններից շատերի միջև լարվածության աճի արդյունքում փոխարինվում են լարվածության և անորոշության նոր ալիքով» [13]: Այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տալիս, որ տվյալ տարում PPI-ի լավագույն արդյունքը կբարձրացնի ապագա բարենպաստ տնտեսական արդյունքների հավանականությունը [14]: *Կառուցողական կապիտալի հայեցակարգը* դրանով կարող է աջակցել տնտեսական գործընթացներին, որոնք, իրենց հերթին, կնպաստեն դրական խաղաղության հետագա ամրապնդմանը:

II. Օրենքի գերակայություն

Օրենքի գերակայությունը լավ կառավարման բազմակողմ պատվիրանն է, որն օգնում է պահպանել կառուցողական կապիտալի քաղաքական և տնտեսական նախադրյալները: Հայտնի իրավաբան Թոմ Բինգհեմը օրենքի գերակայության հիմնարար սկզբունքը սահմանել է հետևյալ կերպ. «Պետությունում բոլոր անձինք և իշխանության մարմինները՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր, պետք է կապված լինեն և իրավունք ունենան օգտվել հանրայնացված և դատարաններում հրապարակայնորեն կիրառվող օրենքներից» [15]: Ելնելով այս ըմբռնումից՝ այստեղ կքննարկվեն օրենքի գերակայության մի քանի կապեր:

Ներդրումային հոսքեր. օրենքի գերակայությունը կարևոր գործոն է օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման և ռիսկերի վերլուծության ժամանակ: Օրինակ՝ բազմազգ ընկերությունների ղեկավարների շրջանում անցկացված հարցումներից մեկը պարզել է, որ օրենքի գերակայությունն օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ որոշումների երեք հիմնական նկատառումներից է՝ ի թիվս «գործարարությամբ զբաղվելու դյուրինության» և «կայուն քաղաքական միջավայրի» [16]: Ներդրողները որպես օրենքի գերակայության ամենակարևոր տարրեր նշել են բարեվարքությունը, կայունությունը և թափանցիկությունը:

Կորպորատիվ պատասխանատվություն. օրենքի գերակայությունը նպաստում է բիզնես գործունեության և նորարարության համար բարենպաստ պայմանների ձևավորմանը՝ ներառյալ երկարաժամկետ աճն ու կայունությունը: Ավելին, մասնավոր հատվածն ինքն է նպաստում օրենքի գերակայությանը՝ գործելով պատասխանատու կերպով, հետևելով կամավոր կանոնադրքերին, բազմակողմ առաջնորդող սկզբունքներին և հավաքական ճյուղային նախաձեռնություններին [17]: Նման ջանքերի օգուտները տարածվում են մատակարարման շղթաների վրա: 2015թ.-ին ՄԱԿ-ի Համաշխարհային պայմանագիրը հրապարակեց *Բիզնեսի և օրենքի գերակայության հայեցակարգը*՝ խրախուսելու մասնակցայնությունը և աջակցելու հաշվետվողականությանը և հավասարությանը [18]:

Տնտեսական ներառականություն և արդարադատության հասանելիություն. օրենքի գերակայությունն օգնում է, որպեսզի ներդրումային հոսքերի և գործարարության օգուտները տարածվեն ավելի լայն բնակչության վրա: Այն նաև նպաստում է կանանց և մարգինալացված համայնքների իրավական հզորացմանը [19]: Սեփականության իրավունքի ճանաչումը և կիրարկումն էական են տնտեսական անվտանգության ու հնարավորությունների համար [20]: Ողջ աշխարհում իրավաբանների միությունների և իրավական կազմակերպությունների նպատակն է օրենքի գերակայության զարգացումը՝ ներառյալ արդարադատության հասանելիության ապահովումը [21]: 2019թ.-ին Արդարադատության աշխատանքային խումբը գնահատել է, որ աշխարհում 5,1 միլիարդ մարդ ունի արդարադատության չբավարարված կարիքներ [22]: Դրանից հետո համավարակը սրեց իրավիճակն արդարադատության բացում հայտնվողների համար: Արդարադատության համակարգերի մարդակենտրոն մոտեցմանն աջակցելու համար ստեղծվել է Արդարադատության գործողությունների նոր դաշինք, որը նաև լուծում է տնտեսական ներառականության հետ կապված մարտահրավերները [23]:

Կայուն զարգացում. կայուն զարգացման օրակարգի մշակման գործընթացը նոր կապեր հաստատեց օրենքի գերակայության և զարգացման միջև: 2012թ.-ին Ռիո+20 համաժողովը հաստատեց. «Մենք ընդունում ենք, որ ազգային և միջազգային մակարդակներում ժողովրդավարությունը, լավ կառավարումը և օրենքի գերակայությունը, ինչպես նաև բարենպաստ միջավայրը կարևոր են կայուն զարգացման՝ ներառյալ կայուն և ներառական տնտեսական աճի համար» [24]: Այսպիսով, օրենքի գերակայությունը սկսեց դիտարկվել և որպես զարգացման խթան, և որպես վերջնարդյունք: Իրավունքի զարգացման միջազգային կազմակերպությունը (The International Development Law Organization, IDLO) ամրապնդեց այս մոտեցումը՝ նշելով, որ օրենքի գերակայությունը «ուժեղացնում է օրենքները՝ թափանցիկությունն ու մասնակցայնությունը խթանելու համար և ուղղորդում պատասխանատու և արդար ներդրումները դեպի տնտեսական, սոցիալական և բնապահպանական առաջնահերթություններ» [25]: ՄԱԿ-ի անդամ պետությունների միջև լուրջ բանավեճերից հետո ԿՁՆ 16-ի՝ «Խաղաղություն, արդարադատություն և ուժեղ ինստիտուտներ» մեջ ներառվեց 16.3. թիրախը. «խթանել օրենքի գերակայությունը և արդարադատության նկատմամբ ապահովել հավասար հասանելիություն» [26]:

Նման կապերի ազդեցությունն արտացոլված է Համաշխարհային արդարադատության նախագծի (World Justice Project, WJP) գործունեության մեջ [27]: Այն իրականացնում է միջառարկայական հետազոտություններ օրենքի գերակայությանն առնչվող հարցերի շուրջ: Համաձայն WJP-ի չորս համընդհանուր սկզբունքների՝ օրենքի գերակայությունն օրենքների, ինստիտուտների, նորմերի և հասարակության հանձնառության կայուն համակարգ է, որն ապահովում է *հաշվեդրվողականություն, արդար օրենքներ, բաց կառավարում և մարչելի ու անաչառ արդարադատություն*: Ամեն տարի WJP-ը հրապարակում է Օրենքի գերակայության իր դասիչը, որը չափում է օրենքի գերակայության փորձը և ընկալումը 128 երկրներում [28]: Նման միտումներն օգնում են ձևավորել ծրագրեր և շահերի պաշտպանություն՝ միտված օրենքի գերակայության բարելավմանը: Օրենքի գերակայության կիրարկումը և դրա պահպանման հարցում զգոնության անհրաժեշտությունը հաստատում են դրա տեղը՝ որպես *կառուցողական կապիտալի անկյունաքարի* [29]:

III. Հաշվետու ինստիտուտներ

Հաշվետու ինստիտուտների անհրաժեշտությունը՝ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ, ակնհայտորեն Կառուցողական կապիտալի հայեցակարգի շրջանակում է: Յուրաքանչյուր *անկյունաքար* կախված է հասարակության տարբեր մակարդակներում գտնվող ինստիտուտների քաղաքականությունից, գործելակերպից և որոշումներից: Հաշվետու ինստիտուտների առաջնային հատկանիշներից է բարեվարքությունը՝ ներառյալ որոշումների կայացման թափանցիկությունը: Սա առանցքային է կոռուպցիայի դեմ պայքարի համար: Մեկ այլ հատկանիշ է ներառականությունը, որի շնորհիվ մարդիկ կարող են տնտեսական հնարավորությունների և հանրային ծառայությունների նկատմամբ ստանալ հասանելիություն հավասար հիմունքներով: Այլ ցուցանիշներից է արդյունավետությունը՝ ինստիտուցիոնալ արդյունքների շեշտադրմամբ [30]: Վերջապես, համընդհանուր թեման վստահության մշակույթի ձևավորման կարևորությունն է:

Այս *անկյունաքարը* հիմքեր է ձևավորում կառուցողական կապիտալի համար: Բացի այդ, այն նաև քայքայող կապիտալի ռիսկերի հավանականությունը մեծացնող կառավարման բացերը շարունակաբար գնահատելու հենակետն է: Հաշվի առնելով նման հոսքերի անդրսահմանային բնույթը՝ հաշվետվողականությունը կարող է խոչընդոտվել տարբեր երկրների խնդիրներով: Սա պահանջում է համակարգված մոտեցում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) գործունեությունը, որը մի քանի ոլորտներում համահունչ է CIPE-ի առաջնահերթություններին, ուղղված է ինստիտուցիոնալ հաշվետվողականության ամրապնդմանը: Օրինակ, ՏՀԶԿ-ի հանրային բարեվարքության ռազմավարության առաջարկը կառուցված է երեք սյուների վրա՝ համակարգ, մշակույթ և հաշվետվողականություն [31]: ՏՀԶԿ-ն ընդգծում է, որ վստահությունը «ինստիտուտների, այդ թվում՝ կառավարությունների, շուկաների, ձեռնարկությունների և ընդհանուր առմամբ հասարակության արդյունավետ կենսագործունեության հիմնարար տարրն է» [32]: Ինչ վերաբերում է կառավարությանը, ն բարեվարքության մշակույթը, ն հանրային ծառայությունների իրազեկ մատուցումը չափազանց կարևոր են ինստիտուտների նկատմամբ վստահությունը բարձրացնելու համար [33]: 2019թ.-ին ՏՀԶԿ-ը մեկնարկեց «Վստահություն բիզնեսին» նախաձեռնությունը, որն ուղղված է ընկերությունների միջև կապերի ու կորպորատիվ կառավարման, պատասխանատու բիզնեսի և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքականությունների մշակման իր գործունեության ամրապնդմանը [34]: CIPE-ը ևս զբաղվում է այս թեմայով՝ սկսելով բիզնեսի նկատմամբ վստահությունից և ավելի լայն իմաստով ընդլայնելով ժողովրդավարական և շուկայական ինստիտուտների նկատմամբ վստահելի հարաբերությունների շրջանակը [35]:

Հետազոտողներն ուսումնասիրել են սոցիալական վստահության և հասարակության բարոյական կառուցվածքի փոխադարձ կապը՝ նշելով, որ դրանք կարող են «գործել միասին՝ ամրապնդելով միմյանց բարենպաստ վերլնթաց պարբերաշրջաններում կամ փոխադարձաբար ենթարկվելով քայքայման արատավոր վայրընթաց պարույրներում» [36]: Այսպիսով, սոցիալական վստահության բարձրացումը միայն օգտակարության կամ գործիքային արժեքի հարց չէ: Այն ունի հիմնարար նշանակություն հասարակության գոյության համար: Սա նաև ազդում է գործարարության և սոցիալական վստահության համաձայնեցման վրա:

Հաշվետու ինստիտուտները կարող են աջակցել կառուցողական կապիտալի հոսքերին: Ընդհակառակը, քայքայող կապիտալն ավելի մեծ ռիսկեր է բովանդակում, եթե նման ինստիտուտները ձախողվում են: Քայքայող կապիտալը ոչ միայն չի զսպվում, այլև թուլանում են ուղղիչ գործողությունների կառուցակարգերը: Հնարավոր երկարաժամկետ հետևանքներով վտանգվում է նաև բարեվարքության և վստահության մշակույթը:

IV. Քաղաքական և տնտեսական ազատություն

Որպես *կառուցողական կապիտալի անկյունաքար*՝ ազատության հայեցակարգն ունի բազմաթիվ չափումներ: Ազատությունը հաճախ արտահայտվում է անհատական իրավունքների և ազատությունների եզրույթներում: Նման իրավունքներն ու ազատությունները ձևավորում են քաղաքական, սոցիալական և տնտեսական կարգը: Իր հերթին, այս կարգի բնույթն ընկած է իրավունքների և ազատությունների ազատ իրագործման հիմքում: Ավելի լայն իմաստով, փոխադարձ ամրապնդման այս գործընթացը կապված է մասնակցայնության և ժողովրդավարության հիմնարար հարցերի հետ [37]: Ազատության դիմամիկ ըմբռնումը կարող է բարձրացնել իրազեկվածությունը քայքայող կապիտալի ռիսկերի մասին և նպաստել կառուցողական կապիտալին աջակցող նախադրյալներին:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ներկայացնում է ազատության բազմաբովանդակ հայեցակարգը, որը հիմնված է արժանապատվության անքակտելիության վրա [38]: Այն հռչակում է, որ «մարդկային ընտանիքի բոլոր անդամների հավասար և անքակտելի իրավունքները ազատության, արդարության և խաղաղության հիմքն են ողջ աշխարհում»: Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի կանոնադրությանը, ապա այն վկայակոչում է խոսքի և հայացքների ազատությունը, վախից և կարիքից ազատությունը, ինչպես նաև տղամարդկանց և կանանց հավասար իրավունքները:

Համընդհանուր հռչակագիրն ունի խորը նշանակություն հասարակությունում արդար կարգուկանոնի հաստատման համար: Այն նպաստում է «սոցիալական առաջընթացին և կյանքի բարելավմանն ավելի ընդգրկուն ազատությունների պայմաններում» [39], հաստատում է ժողովրդի կամքը՝ որպես կառավարության իշխանության հենքի, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանվածությունը: Վերջին յոթ տասնամյակների ընթացքում Համընդհանուր հռչակագիրը զարգացրել է մարդու իրավունքների վերաբերյալ օրենսդրությունը և իրավապաշտպան շարժումը [40]: Շատ համատեքստերում մարդու իրավունքները զարգանում են ժողովրդավարական կառավարման սկզբունքներին զուգահեռ: Ավելին, մարդու իրավունքների առաջնորդող

ուղեցույցները ներկայումս փոխակերպում են առևտրային ձեռնարկությունների պարտականությունները [41]: *Քաղաքական և տնտեսական ազատությունների այս անկյունաքարը* կարող է աջակցել ազատությանը և ժողովրդավարությանը, ինչպես նաև մասնավոր հատվածի պարտավորություններին և իրավունքների պաշտպանությանը:

Freedom House-ը ժողովրդավարությունը բնութագրում է որպես «նորացման շարունակական ծրագիր, որն ի վերջո ապահովում է անվտանգություն և բարգավաճում՝ միաժամանակ պաշտպանելով բոլոր մարդկանց հիմնարար իրավունքները» [42]: Ժողովրդավարության և իշխանավարության դեմ պայքարի *ԱՄՆ ռազմավարության գծով երկկուսակցական աշխատանքային խմբի վերջին զեկույցն* առաջարկում է մի շարք քաղաքական ռազմավարություններ [43]: Կառուցողական կապիտալի հետ կապված կարող են կիրառվել դրա մի քանի առաջարկներ, ինչպիսիք են՝ պետության զավթման դեմ պայքարը և մարդու իրավունքների կորպորատիվ հարգանքին աջակցումը: Աշխարհաքաղաքական հետևանքներից զատ՝ նման միջոցառումները կարող են ամրապնդել իրավունքների ու ազատությունների իրացման տեղական միջավայրը:

V. Սոցիալական և տնտեսական ներառականություն

Սոցիալական և տնտեսական ներառականության անհրաժեշտությունը կառուցողական կապիտալի ընդհանուր համատեքստի մի մասն է: Իրականում, *Կառուցողական կապիտալի հայեցակարգը* մշակելիս CIPE-ը նպատակ է հետապնդել աջակցել օտարերկրյա ներդրումներին, որոնք նպաստում են ներառականությանը՝ տեղական հնարավորությունների, աշխատատեղերի ձևավորման և փոխադարձ օգուտների միջոցով: Ավելի լայն իմաստով, սոցիալական և տնտեսական ներառականության *անկյունաքարը* խրախուսում է կառավարության, բիզնեսի և հասարակության միջև գործակցությունը: Սա ներառում է ինչպես համայնքի բարգավաճման, այնպես էլ ժողովրդավարական արժեքների վրա:

Օրինակ, 2020թ.-ին բազմազանության, հավասարության և ներառականության պահանջը (DEI) դարձավ համախմբման կանչ բոլոր երկրների և մայրցամաքների համար: DEI-ի շարժումը բացահայտում է մեկուսացման բազմաթիվ ձևեր, դիմակայում է խտրական վերաբերմունքին և գործելակերպին ու մարտահրավեր է նետում համակարգերին: DEI-ի տարբեր նախաձեռնություններ իրականացվում են բազմաթիվ ոլորտներում՝ վերափոխելով կազմակերպական առաջնորդությունը, աշխատատեղերը և մշակույթը [44]: Հաշվի առնելով ESG գործոնների կարևորությունը՝ կապերն ամրապնդվում են նաև պատասխանատու ներդրումների ոլորտում: Անհավասարության հետ կապված ֆինանսական բացահայտումների (Task Force on Inequality-related Financial Disclosures, TFID) նոր աշխատանքային խմբի կողմից իրականացվում է ծրագիր, որը ձգտում է մշակել մի շարք չափորոշիչներ, որոնք օգնելու են ընկերություններին և ներդրողներին չափել ու կառավարել անհավասարության ներգործությունը, ինչպես նաև ընկերության և ներդրողների կատարողականի վրա անհավասարության ազդեցությունը [45]:

Վերջին տարիներին այնպիսի թեմաները, ինչպիսիք են սոցիալական ինտեգրումը և համախմբվածությունը, հավասար հնարավորությունները, հանրային ծառայությունների

հասանելիությունը, քաղաքացիների մասնակցությունը, բազմազանության նկատմամբ հարգանքը և խմբային լեգիտիմությունը, առանցքային են քաղաքականությունների մշակման համար [46]: Սա արտացոլվում է ամեն ինչում՝ սկսած տնտեսության տարբեր ոլորտներում գենդերային հիմքով խտրականությունը վերացնելու իրավական բարեփոխումներից մինչև խոշոր ենթակառուցվածքային ծրագրերում համայնքների հետ համագործակցության արձանագրությունները: Համաշխարհային բանկը ևս զգալի ներդրում է ունեցել սոցիալական և տնտեսական ներառականության հարցում՝ *Մարդկային զարգացման տարեկան զեկույցի (Human Development Report, HDR)* և *Մարդկային զարգացման դասիչի (Human Development Index, HDI)* միջոցով [47]: Բարեկեցության վերաբերյալ նման մոտեցումները կենտրոնանում են աղքատության բազմաչափ ասպեկտների, ինչպես նաև բարգավաճման խոչընդոտները հաղթահարելու ուղիների վրա: Նման քաղաքականությունը խթանվում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման օրակարգի միջոցով, որը պարտավորվում է «ոչ ոքի չթողնել հետևում» [48]:

Ի վերջո, մասնավոր հատվածն անփոխարինելի դեր է խաղում սոցիալական և տնտեսական ներառականության հարցում: Սրա վրա է կենտրոնացած ՏՀԶԿ-ի և գլխավոր տնօրենների գլխավորած գլոբալ դաշինքի՝ «Բիզնեսը հանուն ներառական աճի» (Business for Inclusive Growth, B4IG) գործընկերությունը [49]: Դրա նպատակները ներառում են անհավասարությունների վերացումը, հնարավորությունների ստեղծումը և ներառական միկրոտնտեսական գործարար մոդելների խթանումը: Այս աշխատանքային ծրագիրը կարող է ամրապնդել *Կառուցողական կապիտալի հայեցակարգին* առնչվող մի քանի ռազմավարություններ, ինչպիսիք են՝ ներառականությունն ընկերությունների էկոհամակարգերում, պետություն-մասնավոր հատված գործընկերության կառավարումը և օտարերկրյա ուղղակի ներդրումների որակի գնահատումը:

VI. Արժեքներով առաջնորդվող մասնավոր հատված

Կառուցողական կապիտալի հայեցակարգն առաջ մղելու համար արժեքներով առաջնորդվող մասնավոր հատվածի հանձնառությունը կարող է կիրառվել տարբեր ձևերով: Այս բաժինն ընդգծում է առաջադեմ և հաշվետու գործարար մշակույթի ձևավորմանը նպաստող մի քանի թեմաներ: Նման թեմաները նաև հավաստվում են CIPE-ի հիմնարար արժեքներով, որոնք են ներառական շուկաները և ժողովրդավարությունը՝ որպես յուրաքանչյուր քաղաքացու համար ներառական աճի խթանման միջոց: Այս Ձեկույցի չորրորդ մասում դիտարկվում է պատասխանատու բիզնեսի և ֆինանսների փոփոխվող միջավայրը:

Արժեքների շրջանակը. այս *շրջանակը* սահմանում է բազմաթիվ արժեքներ, որոնք կարող են ազդել ընկերության համապատասխանության, գործարար մոդելների և ավելի լայն սոցիալական պարտավորությունների հետ կապված գործարար վարքագծի վրա: Բոլոր *անկյունաքարերին* գործարար համայնքի ակտիվ աջակցությունը կարող է նպաստել նման արժեքների իրացմանը: Ավելին, նման աջակցությունը կարող է օգնել արժեքների տարածմանն առևտրային հարաբերություններում և մատակարարման շղթաներում՝ ազդելով տնտեսական ավելի լայն համակարգի վրա:

Առաջնորդության և կառավարման դերը. մասնավոր հատվածում առաջնորդներն ավելի ու ավելի հաճախ են սահմանում իրենց կորպորատիվ արժեքները և ձևավորում կազմակերպական մշակույթ: ԱՄՆ-ում Կորպորատիվ տնօրենների ազգային ասոցիացիան մշակույթը բնութագրում է որպես «կորպորատիվ ակտիվ» և կոչ է անում խորհրդին, գլխավոր տնօրենին և ավագ ղեկավարությանը պարզաբանել արժեքների և մշակույթի հիմնարար տարրերը [50]: Մեծ Բրիտանիայի Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը նախատեսում է. «Խորհուրդը պետք է սահմանի ընկերության նպատակը, արժեքները և ռազմավարությունը և համոզվի, որ դրանք համահունչ են կորպորատիվ մշակույթին: Բոլոր տնօրենները պետք է գործեն ազնվորեն, օրինակ ծառայեն և առաջ մղեն ցանկալի մշակույթը» [51]: Կորպորատիվ կառավարման և համապատասխանության բարելավումները գործարար մշակույթի չափորոշիչների ու արդյունքների հետ մեկտեղ առանցքային նշանակություն ունեն CIPE-ի ընդհանուր նպատակների համար:

Շահակիցների ներգրավվածությունը. ի լրումն «ընդհանուր արժեքներին»՝ շահակիցների հետ համագործակցությունը պատասխանատու բիզնեսի ամենահին բնութագրիչներից է: Նման հարաբերությունների պարամետրերը ներկայումս փորձարկվում են՝ հատկապես հաշվի առնելով կորպորատիվ նպատակների և բաժնետիրական արժեքի մաքսիմալացման շուրջ ծավալված բանավեճերը [52]: CIPE-ն իր ծրագրերում ներառում է շահակիցների լայն շրջանակ՝ խթանելով դրանց դերը մասնավոր և պետական հատվածների հաշվետվողականության ամրապնդման հարցում:

Երկարաժամկետ հեռանկարները. արժեքներին նվիրվածությունը ոգեշնչում է դեպի նոր ժամանակային հորիզոններ՝ դուրս գալով եռամսյակային ֆինանսական արդյունքների շրջանակից և ստեղծելով երկարաժամկետ արժեք: Սա կարող է խրախուսել ներդրումները մարդկային, սոցիալական և բնական կապիտալում: Այն պահանջում է մի շարք ռիսկերի խիստ գնահատում՝ ներառյալ կորպորատիվ հեղինակությունը: Նման հեռանկարները կարող են հանգեցնել կազմակերպական ավելի մեծ ճկունության և առևտրային հնարավորությունների:

Գործարար համայնքը. արժեքներով առաջնորդվող ընկերություններն ակտիվորեն համագործակցում են գործարար ավելի լայն համայնքի հետ՝ ներառյալ գործարար և մասնագիտական ասոցիացիաները: Տարբեր երկրներում սա որոշում է CIPE-ի ծրագրերի բովանդակությունը. «Ժամանակի ընթացքում կառավարման և շուկաների ամրապնդումը կարող է նպաստել օրենքների, կանոնների, մշակույթի և ինստիտուտների բարենպաստ էկոհամակարգի ձևավորմանը, որը խթանում է նորարարական ձեռնարկությունների զարգացումը և հարստություն է ստեղծում հասարակության ավելի լայն խավերի համար» [53]: Նման էկոհամակարգն առանցքային նշանակություն ունի *Կառուցողական կապիտալի հայեցակարգի* իրականացման, այդ թվում՝ կառավարման բացերի բացահայտման համար: Հայեցակարգն ընդգծում է նաև դինամիկ փոփոխությունները տնտեսական մրցակցության և համագործակցության հարաբերություններում:

Վստահությունը. արժեքների և գործողությունների համաձայնեցվածությունը նպաստում է գործարար հարաբերություններում վստահությանը՝ լինեն դրանք աշխատակիցների, հաճախորդների, մատակարարների կամ այլ շահակիցների հետ: Ավելի լայն իմաստով, արժեքների վրա հիմնված մոտեցումը կարող է ամրապնդել վստահությունը բիզնեսի, կառավարության և քաղաքացիական հասարակության միջև: *Edelman Trust Barometer-ի 2022թ.-ի* հետազոտությունը ցույց է տալիս, որ բիզնեսը որպես ամենավստահելի ինստիտուտ պահպանել է իր դիրքերը [54]: Գլխավոր տնօրեն Ռիչարդ Էդելմանը նշում է. «Բիզնեսն այժմ պետք է լինի կայունացնող այն ուժը, որը հասարակության ամենակարևոր խնդիրների ուղղությամբ ձեռնարկում է գործողություններ և ապահովում շոշափելի արդյունքներ: Սոցիալական առաջնորդումն այժմ բիզնեսի հիմնական գործառույթն է» [55]: Սա ենթադրում է մասնավոր հատվածի ընդլայնված առաքելություն, որը կարող է հնարավորություններ բացել կառուցողական կապիտալի առաջխաղացման համար:

Կառուցողական կապիտալի վեց անկյունաքարերն առաջարկում են հիմքեր տարբեր շահակիցների վերլուծության և գործողությունների համար: Մասնավորապես, դրանք կարող են ծառայել որպես ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների արդյունքների գնահատման ելակետ: Այս զեկույցի հաջորդ բաժնում ներդրումների, բարեվարքության և ազդեցության ինտեգրված մոտեցման միջոցով դիտարկվում է կառավարման բացերը հաղթահարելու մոդելը:

Մաս երրորդ. Կառավարման բացերի հաղթահարումը. ներդրումներ, բարեվարքություն և ազդեցություն

Կառուցողական կապիտալի հայեցակարգը պետք է շարունակաբար արձագանքի ներդրումների, բարեվարքության և ազդեցության դինամիկ փոխկապակցվածությանը:

Ներածությունում նկարագրվում են ինչպես քայքայող կապիտալի բացասական, այնպես էլ կառուցողական կապիտալի դրական ազդեցությունները: Այս հակադրությունն ուշադրության կենտրոնում է պահում կառավարման բացերը: Ինստիտուցիոնալ խնդիրներից են ոչ համարժեք գնումների ընթացակարգերը, թափանցիկության և վերահսկողության բացակայությունը, կանոնակարգերի կիրարկման ձախողումները և դատական գործընթացների թերությունները: Ինչպես կարող են ներդրումները դառնալ ավելի քիչ քայքայող և ավելի կառուցողական: Ինչպես են իրականացվում և կիրարկվում բազմամակարդակ բարեվարքության կառուցակարգերը: Ինչպես կարող են պետական և մասնավոր հատվածներում ազդեցության գնահատման նորարարական մոտեցումներն օգնել քաղաքականությունների ձևավորմանը և կատարողականի բարելավմանը:

1. Ներդրումներ. մասնավոր կապիտալի հոսքերը դեպի զարգացող երկրներ

Ա. Ընդհանուր ակնարկ

1980-ականներից ի վեր կապիտալի հոսքերը դեպի անցումային շուկաներ և զարգացող երկրներ (emerging market and developing countries, EMDC) հիմնականում առաջնորդվում էին մասնավոր հատվածի կողմից և, ինչպես նախկինում, կախվածություն չունեին պաշտոնական հատվածից [56]: Արդյունքում, մասնավոր կապիտալի հոսքերը դարձել են զարգացած երկրների խնայողությունները զարգացող և սահմանային շուկաներում ներդրումների վերածելու հիմնական կապուղիներ: Այս երևույթի հիմքում ընկած մոտիվացիան պարզ է: Արդյունաբերական զարգացած երկրները որպես կանոն կապիտալատար են, և դրանցում կապիտալի սահմանային եկամտաբերությունն ընդհանուր առմամբ ավելի ցածր է, քան կապիտալի կարիք ունեցող երկրներում: Հետևաբար՝ զարգացած երկրների ներդրողները կարող են անցումային տնտեսություններում իրենց ներդրումներից ակնկալել ավելի բարձր եկամուտներ՝ միաժամանակ աջակցելով այդ երկրների աճին: Իրոք, բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ օտարերկրյա կապիտալի հոսքերը կարող են օգնել EMDC-ներում կրճատել խնայողությունների և ներդրումների միջև առկա բացը՝ աջակցելով այդ երկրների զարգացման ջանքերին [57]: Ավելին, առկա է զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ կապիտալի հոսքերի աճի զգալի ներուժ:

Սակայն այս դրական միտումների հետևում գտնվում են մասնավոր կապիտալի տարբեր տեսակի հոսքերը, որոնք կարող են տարբեր կերպ ներազդել ներդրումներն ընդունող երկրների վրա. որոշները՝ դրական, իսկ որոշները՝ բացասական: Կապիտալի հոսքերը պայմանականորեն կարելի է բաժանել օտարերկրյա ուղղակի ներդրումների (foreign direct investment, FDI կամ ՕՈւՆ) և օտարերկրյա պորտֆելային ներդրումների (foreign portfolio investment, FPI): FDI-ի միջոցով ներդրողը կամ ներդրողների խումբը ձեռք է

բերում մեկ այլ երկրում գործող ձեռնարկության բաժնեմասնակցությունը, կամ գնում է ձեռնարկությունն ուղղակիորեն՝ երկարաժամկետ հատվածում ձեռնարկությունը վերահսկելու նպատակով: FPI-ը ներառում է այլ երկրների ֆինանսական ակտիվներ ձեռք բերող ներդրող կամ ներդրողների խումբ: Դա կարող է տեղի ունենալ ֆոնդային շուկայում ցուցակված ընկերությունների բաժնետոմսերի գնման միջոցով՝ դրանց արժեքի բարձրացման ակնկալիքով, մասնավոր ընկերություններին վարկավորելով, կամ պետության կամ մասնավոր ընկերությունների կողմից թողարկված պարտատոմսեր գնելով՝ ապագայում ֆիքսված եկամուտներ ստանալու դիմաց:

Կապիտալի հոսքերի որոշ ձևեր կարող են լինել կառուցողական՝ օգնելով ներդրումներ ընդունող երկրների ինդուստրիալիզացմանը, գործարար պրակտիկայի զարգացմանը և ընդհանուր կառավարման ու տնտեսական ինստիտուտների կատարելագործմանը: FDI-ն ավելի «կաշուն» է, քան FPI-ը, քանի որ FDI-ը հաճախ իրենից ներկայացնում է երկարաժամկետ ներդրում երկրի առանցքային ոլորտներում կամ ձեռնարկություններում: Ճիշտ նախագծման դեպքում այն ստեղծում է աշխատատեղեր և տեղերում զարգացնում աջակցող ծառայությունները: Կապիտալի հոսքերի այլ ձևերը կարող են լինել քայքայող, քանի որ թուլացնում են արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ինստիտուտները: FPI-ն ավելի հեշտ է դուրս հանել երկրից և երբեմն կարող է մեծացնել պարտքերը՝ առանց տեղական ընկերությունները և համայնքներն ամրապնդելու: Տարբեր ակադեմիական հետազոտություններ EMDC-ներում բացահայտել են դրական կապեր FDI-ի և տնտեսական զարգացման միջև, ինչպես նաև բացասական կապ՝ FPI-ի և տնտեսական զարգացման միջև: Հանրային քաղաքականության համապատասխան միջոցառումները դիտարկելիս կարևորվում է կապիտալի անդրսահմանային հոսքերի ազդեցության մասին ավելի խորը պատկերացում կազմելը:

Բ. Քայքայող կապիտալ

Քայքայող կապիտալը հաճախ բնութագրվում է անկայունությամբ և թափանցիկության բացակայությամբ: Ավելին, վերնախավին զավթելու խնդիրը, համաձայն որի՝ ներդրումները ձեռնտու են երկրի բնակչության *վերին նեղ շերտերի համար*, կարող է սրել տնտեսական և սոցիալական անհավասարությունները:

FPI-ը ցիկլիկ է և անկայուն: Աճի ժամանակահատվածում պորտֆելային կապիտալը հոսում է դեպի EMDC-ներ, որին հաջորդում է հանկարծակի կանգը, ինչն արագացնում է նաև կապիտալի արտահոսքը: Տեղի իշխանությունների համար դժվար է հաղթահարել պորտֆելային կապիտալի հոսքերի այս «բում և անկում» օրինաչափությունը: Ներհոսքի փուլում՝ կապիտալի հոսքի գրավչությունը պակասեցնելու նպատակով տոկոսադրույքների նվազեցումը կարող է խթանել տնտեսական վերելքը: Սա կարող է մեծացնել ակտիվների գնային փուլիկների ծագման ռիսկը: Երկրում իրավիճակը վատանալիս այդ ակտիվների գինը կարող է հանկարծակիորեն ընկնել: Արտահոսքի փուլում ներդրողներին խրախուսելու համար տոկոսադրույքների բարձրացումը կարող է սրել տնտեսական անկումը: Այսպիսով, որոշ հետազոտություններ մատնանշում են FPI-ի և տնտեսական աճի միջև բացասական կապը [58]:

Մեկ այլ անլուծելի խնդիր է կապիտալի որոշ տեսակների կտրվածքով թափանցիկության բացակայությունը: Մասնավոր անձանց միջև ֆինանսական գործարքների

գաղտնիությունը պահպանելու համար գոյություն ունեն օրինական պատճառներ: Սակայն, երբ փոխառուներն ինքնիշխան երկրներ են կամ դրանց պաշտոնական մարմիններ, բացահայտման և թափանցիկության բացակայությունը կարող է բարենպաստ միջավայր ստեղծել չարաշահումների համար: Վատագույն դեպքում ոչ թափանցիկ արտաքին փոխառությունները կարող են խթանել տեղական պաշտոնյաների կողմից կոռուպցիոն ռիսկերին դիմելը: Դա կարող է հանգեցնել չմտածված և վատնողական ներդրումային ծրագրերի, որոնք մեծացնում են երկրի պարտքը, սակայն ոչ պարտքը մարելու կարողությունը: Առանց համարժեք բացահայտման և թափանցիկության՝ երկրի պարտքը կարող է աճել: Եթե միջազգային ֆինանսական շուկաներում երկրի պարտքերը մարելու կարողությունների վերաբերյալ մտավախություններ են ծագում, ներդրողների սպասումները եկամտաբերության վերաբերյալ աճում են: Նման ճնշումը կարող է հանգեցնել շուկայական տոկոսադրույքների բարձրացման՝ ստեղծելով ներդրողների վստահությունը կորցնելու ռիսկը: Սա երկրում կարող է նույնիսկ հանգեցնել պարտքային ճգնաժամի՝ վտանգելով աճի հեռանկարները և պարտքային բեռը դնելով ապագա սերունդների վրա:

EMDC-ներին օտարերկրյա վարկավորման հարցում թափանցիկության բացակայության վերաբերյալ ներկայիս մտահոգությունը հիմնականում պայմանավորված է Չինաստանի և այլ իշխանավարական պետությունների գործելաոճով: Մոտավորապես վերջին երկու տասնամյակների ընթացքում Չինաստանը զգալիորեն ավելացրել է իր ֆինանսավորումը EMDC-ներին, որոնք ընդհանուր առմամբ աշխարհի 150 երկրների համար գնահատվում են 1,5 տրիլիոն դոլար [59]: Ֆինանսավորման մեծ մասը, բայց ոչ ամբողջը, օգտագործվել է 2013թ.-ին մեկնարկած «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության (Belt and Road Initiative, BRI) միջոցով [60]: Չնայած Չինաստանը հանդիսանում է EMDC-ների աշխարհի ամենամեծ վարկատուն, դրա տարբեր վարկատու կազմակերպությունների, ինչպես նաև գումարների, դրանց նպատակային նշանակության և պայմանների վերաբերյալ բավարար թափանցիկություն առկա չէ [61]: Թափանցիկության բացակայությունը մտահոգությունների տեղիք է տալիս տեղական պաշտոնյաների կողմից վարկերը չարաշահելու հնարավորության տեսանկյունից, այդ թվում՝ անօգուտ ներդրումների, որոնք երկիրը թողնում են մեծ պարտքերի բեռի տակ՝ առանց պարտքը սպասարկելու նոր արտադրական կարողությունները զարգացնելու [62]: Երկրները, որոնք չեն կարողացել վճարել պարտքը (ներառյալ՝ Շրի Լանկան, Ջիբութին [63] և այլք), պարտավոր էին իրենց նավահանգիստների սեփականությունը կամ վերահսկողությունը հանձնել չինական պետական վարկատուներին: Ավելին, բարդ են պարտքի վերակառուցման ընթացակարգերը, և ցածր եկամուտ ունեցող շատ երկրներ զգուշանում են դրանցով պայմանավորված հեղինակության վնասից: Վերջապես, պաշտոնական վարկավորումների միջև տարբերությունների բացակայությունը ևս կարող է լինել խնդրահարույց, օրինակ՝ Չինաստանի Արտահանման-ներմուծման բանկի (որը մասնակցում է պաշտոնական երկկողմանի վարկատուների Փարիզի ակումբին) և պետական սեփականություն հանդիսացող վարկատուների միջև, ինչպիսին Չինաստանի զարգացման բանկն է (որն իրեն համարում է մասնավոր): Օրինակ, սա ազդել է ցածր եկամուտ ունեցող երկրներում համավարակով պայմանավորված ֆինանսական ճնշումները մեղմելու համար պարտքի կասեցման պաշտոնական ընթացակարգերի վրա [64]:

Գ. Կառուցողական կապիտալ

Կապիտալի հոսքերը կարող են լինել քայքայող կամ կառուցողական՝ կախված դրանց ինստիտուցիոնալ և իրավական շրջանակներից, և հաշվի առնելով, թե որտեղից են դրանք ծագում և դեպի ուր են ուղղվում: Այստեղ ներկայացվում են կառուցողական կապիտալի երկու օրինակ, որոնցից մեկը վերաբերում է FDI-ներին, իսկ երկրորդը՝ ենթակառուցվածքային ներդրումներին:

Առաջին օրինակն առնչվում է կապիտալի կայուն երկարաժամկետ հոսքերին, որոնք բնութագրվում են որպես շուկայական և թափանցիկ FDI-ներ [65]: FDI-ներն իրենց ծավալներով համադրելի են պորտֆելային հոսքերին, սակայն դրանք ավելի կայուն են: Հատկանշական է, որ դրանք հիմնականում խուսափում են վերելքների և անկումների պարբերաշրջաններից: FDI-ների ներդրողները սովորաբար իրենց կապիտալը տրամադրում են երկարաժամկետ հեռանկարի համար: Ներդրումներ ստացող ընկերություններին շահութաբեր դարձնելու նպատակով՝ դրանց փոխանցում են արտադրական, կառավարման և շուկայավարման հմտություններ:

Ընդ որում՝ FDI-ներն օգնում են զարգացնել ստացող երկրների կորպորատիվ հատվածը՝ ներառյալ ընկերությունների իրավական միջավայրը: Նման օրինակներից է Խորհրդային Միության փլուզումից հետո FDI-ների աջակցող դերը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ժողովրդավարական և շուկայավարման անցման գործում:

Բազմաթիվ հետազոտություններ հաստատում են FDI-ների և տնտեսական զարգացման դրական կապը զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում [66]:

Երկրորդ օրինակը վերաբերում է EMDC-ներում ենթակառուցվածքային ներդրումներին, որոնք կարող են խթանել տնտեսական աճը և կառուցողական կապիտալին նպաստող այլ նախադրյալներ: Այնուամենայնիվ, առկա է նման ֆինանսավորման լուրջ պակաս: Եթե դրանք չվերացվեն, քայքայող կապիտալի ռիսկերը կարող են խորանալ: ՏՀԶԿ-ը տրամադրում է զարգացող երկրների ենթակառուցվածքային ներդրումների տարեկան կարիքների գնահատականը [67]: Ի լրումն մասնավոր հատվածի ներդրումների՝ հանրային հատվածի միլիարդավոր դոլարների փաստացի ներդրումները դեռևս չեն լրացնում ենթակառուցվածքային ներդրումների տարեկան մոտ 50% բացը: Ապագայում ենթակառուցվածքային ներդրումներում պետական ֆինանսավորումը դժվար թե էականորեն ավելանա՝ հատկապես հաշվի առնելով համավարակով պայմանավորված բյուջետային սահմանափակումները, որոնք սրվում են սոցիալական և առողջապահական ծախսերի աճող կարիքներով: Նմանապես, ենթակառուցվածքային նախագծերի թողունակության և չպաշտպանվածության խնդիրներով պայմանավորված մասնավոր հատվածի ներդրումները, հավանաբար, բավարար չեն լինի [68]: Նման իրավիճակը կարող է մեծացնել ճնշումը EMDC-ների վրա՝ դիմելու կապիտալի այնպիսի աղբյուրների, որոնք կարող են լինել քայքայող՝ դրանով իսկ խաթարելով *կառուցողական կապիտալի անկյունաքարերը*:

Դ. Կառուցողական կապիտալը խրախուսելու քաղաքական միջոցները

Վատագույն ելքի կասեցմանը միտված պաշտպանողական քաղաքականությունը կարող է չնվազեցնել քայքայող կապիտալի ռիսկերը: Լավագույն արդյունքների նվաճմանը միտված հարձակողական քաղաքականությունը կարող է ձևավորել ներդրումային ավելի բարենպաստ միջավայր: Քայքայող կապիտալից հիասթափությունն առաջին հերթին վերաբերում է մասնավոր հատվածի մասնակցությամբ պետական քաղաքականությանը, որտեղ դա կիրառելի է: Հակառակը, կառուցողական կապիտալի խրախուսումը գերազանցապես բխում է մասնավոր հատվածից՝ պրոֆեսիոնալ կառավարման և վստահության ամրապնդման միջոցով: Սա կարևորում է անկախ առևտրային պալատների և գործարար ասոցիացիաների դերը [69]:

Հաշվի առնելով պետական և մասնավոր հատվածների տարբերությունները՝ գոյություն ունեն որոշակի քաղաքական միջոցներ, որոնք կառավարությունները կարող են ձեռնարկել՝ միաժամանակ քայքայող կապիտալը խոչընդոտելու և կառուցողական կապիտալը խրախուսելու համար: Դրանք այստեղ ներառված են որպես ցուցադրական օրինակներ, այլ ոչ թե առաջարկություններ: Նման ջանքերը վկայում են կառավարման բացերը լրացնելու ուղիների մասին, մասնավորապես ի հաշիվ ընթացակարգերի բարելավման, թափանցիկության և հաշվետվողականության: Միջսահմանային ներդրումներ ներգրավելիս դրանք նաև առաջարկում են մրցակցային հնարավոր առավելություններ:

Առաջին հերթին, դրանք միջազգային ֆինանսական գործարքների, հատկապես EMDC-ներում բանկերի և ընկերությունների վարկավորման վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանը և թափանցիկությանը միտված միջոցներ են [70]: Ցածր եկամուտ ունեցող երկրներից միայն մի քանիսն են համապատասխանում Համաշխարհային բանկի՝ պարտքի հաշվետվողականության և գնահատման պահանջներին: Զարգացման միջազգային ասոցիացիայի արտոնյալ վարկավորումից օգտվելու իրավունք ունեցող զարգացող երկրների միայն մեկ երրորդն է հաշվետվություններ ներկայացնում մասնավոր հատվածի արտաքին պարտքի վիճակագրության վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, EMDC-ների մեծամասնությանը չի հաջողվում ապահովել քաղաքական ճնշումներից փոխառության որոշումների պատշաճ տարանջատումը, ինչպես նախատեսված է Համաշխարհային բանկի պարտքի կառավարման, իրավական դաշտի և աուդիտի պրակտիկայի պահանջներում:

Մասնավորապես, բոլոր երկրների կառավարությունները, հատկապես EMDC-ները, համաձայն IV-րդ հոդվածի՝ ԱՄՀ-ի հետ կանոնավոր խորհրդակցությունների, և, իհարկե, ԱՄՀ-ի հետ աջակցության ծրագրերի մասին բանակցելիս՝ վերջինիս պետք է տեղեկատվություն բացահայտեն իրենց ընդհանուր պարտքի մասին [71]: Բացի այդ, անհրաժեշտ է խրախուսել կառավարություններին՝ իրենց քաղաքացիներին ֆինանսավորման մեխանիզմների մասին պատշաճ կերպով տեղեկատվություն բացահայտելու համար: Թափանցիկության բարձրացումը կարող է օգնել ազգային օրենսդիր մարմիններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և հանրությանը համագործակցելու կառավարությունների հետ և վերահսկելու դրանց գործունեությունը հանրային ֆինանսների կառավարման հարցերում: Սա կարող է նվազեցնել կոռուպցիան կամ պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը՝ միաժամանակ ամրապնդելով օրենքի գերակայությունը և լավ կառավարումը:

Քաղաքական երկրորդ պատասխանը երկարաժամկետ ներդրումները, այլ ոչ թե ծայրահեղ կարճաժամկետ գործարքները խրախուսելու համար կանոնների վերանայումն է: Իրապես, շատ երկրներում արդեն հարկաբյուջետային կարգավորումներով կապիտալի երկարաժամկետ հավելաճը հարկվում է ավելի ցածր դրույքաչափերով, քան կապիտալի կարճաժամկետ հավելաճը: Սակայն ֆինանսական հաստատությունների համար, ինչպիսիք են բանկերը, կյանքի ապահովագրության ընկերությունները և կենսաթոշակային հիմնադրամները, կանխարգելիչ նորմերը կողմնակալ վերաբերմունք ունեն ակտիվների երկարաժամկետ տնօրինման նկատմամբ: Դրանք կարճաժամկետների համեմատ ենթակա են հարկման ավելի բարձր դրույքով: Կարգավորման այս մոտեցումը պետք է ճշգրտվի երկարաժամկետ ներդրումները խրախուսելու համար, սակայն այնպես, որ չվտանգի տեղեկատվության բացահայտման ստանդարտների, ռիսկերի կառավարման և երկարաժամկետ ակտիվների գնահատման հետ կապված ինստիտուցիոնալ խնդիրները:

Քաղաքական երրորդ պատասխանը կապված է գործարարությանն աջակցող իրավական, կարգավորող և ինստիտուցիոնալ շրջանակների զարգացման, ինչպես նաև զարգացող երկրներում տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման հետ: Այս մոտեցումն ամրապնդում է զարգացող շուկաներում CIPE-ի առանցքային նպատակները, ինչպես նաև կառուցողական կապիտալի առաջնղման հարցում զգալի հնարավորություն է տալիս կառավարության առաջնորդներին: Օրինակ, զարգացող երկրներում գործարար իրավական ուժեղ միջավայրին աջակցելու կարողությունն առանցքային ակտիվ է կապիտալի ամենակայուն և շահավետ ձևի՝ FDI-ների ներգրավման մրցակցային պայքարում: Նման ջանքերը պետք է հիմնված լինեն քաղաքականության մշակման ներառականության և տեղական գործարար համայնքի հետ պետության երկխոսության վրա: Ընդհանուր առմամբ, նման ռազմավարությունը կարող է նպաստել տնտեսության արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Ի վերջո, պետք է ջանքեր գործադրվեն պետական-մասնավոր գործընկերության (PPP) սխեմաների կատարելագործման և ավելի ընդարձակ ներդրումային ծրագրերի ուղղությամբ՝ միջազգային ներդրողների համար դրանք ավելի օգտակար դարձնելու համար: Զարգացող երկրներում ձգտելով օգտագործել ենթակառուցվածքային նախագծերում մասնակցությունը՝ անհրաժեշտ է շրջահայացություն դրսևորել պետական ձեռնարկությունների դերի վերաբերյալ: Համաշխարհային բանկը սահմանել է երեք քայլ, որոնք երկրները, հատկապես EMDC-ները, կարող են ձեռնարկել հաջող PPP-ների համար պայմաններ ձևավորելու համար [72]: Նախ՝ ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի ներդրումները համախմբելու համար ստանձնել PPP-ի ջանքերը խթանելու և աջակցելու հստակ քաղաքական հանձնառություն: Երկրորդ՝ PPP ծրագրերի նախապատրաստումն ու իրականացումն արագացնելու համար բարելավել և հստակեցնել գործընթացները: Երրորդ՝ մասնավոր ընկերությունների հետ համագործակցելիս ձևավորել PPP ծրագրային հատուկ թիմեր՝ PPP պայմանագրերի և նախագծերի վերաբերյալ բանակցելու, պլանավորելու և կառավարելու համար: Այս երեք ոլորտներում առաջընթացը EMDC-ներին կարող է հնարավորություն տալ ձեռք բերել մրցակցային առավելություններ միջազգային մասնավոր ներդրողներին իրենց PPP ծրագրերում ներգրավելու և կառուցողական կապիտալի համար պայմանները բարելավելու հարցում:

II. Բարեվարքություն. հակակոռուպցիոն կանոններ, ինստիտուտներ և հաշվետվողականության կառուցակարգեր

Ա. Ընդհանուր ակնարկ

Կառուցողական կապիտալի տեսանկյունից բարեվարքությունը կախված է կոռուպցիան նվազագույնի հասցնող էկոհամակարգից: Սա բարձրացնում է բիզնեսի արդյունավետությունը և խթանում տնտեսական և ներդրումային հնարավորությունները՝ (1) նվազեցնելով բիզնեսի իրավական ռիսկերն ու ծախսերը՝ ինչպես ընդունող երկրում, այնպես էլ ծագման երկրում, (2) հնարավորություն տալով բիզնեսին մրցակցել և գործել շուկայում առանց կոռուպցիոն բեռի և ծախսերի և (3) թույլ տալով բիզնեսին արդարացիորեն մրցակցել ապրանքների, ծառայությունների և ենթակառուցվածքային նախագծերի պետական գնումների գործընթացում:

Այս բաժինը համառոտ նկարագրում է իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները, ինչպես նաև հակակոռուպցիոն էկոհամակարգի ձևավորման համար էական նշանակություն ունեցող հաշվետվողականության կառուցակարգերը [73]: Սա վերաբերում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներին [74]: Նման շրջանակները գործում են միջազգային, ազգային և տարածաշրջանային մակարդակներում և հաշվի են առնում կոռուպցիայի և պահանջարկի, և առաջարկի կողմերը: Բիզնեսի համար հատկապես կարևոր են արտատարածքային գործողության ուժ ունեցող հակակոռուպցիոն ազգային օրենքները: Այստեղ հարկ է նշել, որ «քայքայող կապիտալ» հասկացությունը չի տարածվում փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված անօրինական ֆինանսական հոսքերի վրա [75]: Այնուամենայնիվ, կոռուպցիան կարող է խթանվել ապօրինի ֆինանսական հոսքերին նպաստող համակարգերի միջոցով:

Կառուցողական կապիտալի հայեցակարգը կարող է օգնել լուծել կոռուպցիայի խնդիրը մի քանի առումներով: Ներդրումներ ընդունող երկրում կոռուպցիան ռիսկ է: Կապիտալ ներդրումների վերաբերյալ բոլոր որոշումները պահանջում են ռիսկի և եկամտաբերության գնահատում ինչպես կապիտալ տրամադրողի, այնպես էլ ընդունող երկրի կողմից: Թեև ներդրողներն ունեն ռիսկի հանդուրժողականության տարբեր միջակայք, նրանցից շատերին անհրաժեշտ է վստահության ողջամիտ մակարդակ, որ իրենց ներդրումները կլինեն եկամտաբեր և պաշտպանված: *Կառուցողական կապիտալի անկյունաքարերը*՝ ներառյալ դրական խաղաղությունը, օրենքի գերակայությունը և հաշվետու ինստիտուտները, կարող են ամրապնդել այդ վստահությունը: Իրապես, կոռուպցիայի հետևանքները կարող են էապես խարխուլել բոլոր վեց *անկյունաքարերը*: Բարեվարքության արդյունավետ ռազմավարությունները նախագծվում են կառավարման բացերը շարունակաբար բացահայտելու և վերացնելու համար: Ավելին, իրականացման հարցում դրանք ավելի ու ավելի շատ են հիմնվում բազմաշահակից մոտեցումների, ինչպես նաև ազդեցության գնահատումների վրա:

Բ. Հակակոռուպցիոն նորմեր և ինստիտուցիոնալ շրջանակներ

Միջազգային և ազգային մակարդակներում բազմաթիվ իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներ աջակցում են հակակոռուպցիոն միջոցառումներին: Միջազգային մակարդակում կոռուպցիայի և կաշառակերության դեմ նորմն արտացոլված է բազմակողմ կոնվենցիաներում, ինչպես նաև միջազգային և միջկառավարական կազմակերպությունների կողմից մշակված քաղաքականություններում, ուղեցույցներում, չափորոշիչներում և գործիքներում: Հիմնական կոնվենցիաները, որոնք իրավաբանորեն պարտադիր են դրանք վավերացրած պետությունների համար, ներառում են ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան (UNCAC), Միջազգային բիզնես գործարքներում օտարերկրյա պետական պաշտոնյաներին կաշառելու դեմ պայքարի ՏՀԶԿ կոնվենցիան, Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի Աֆրիկյան միության կոնվենցիան, Կոռուպցիայի դեմ պայքարի միջամերիկյան կոնվենցիան և Եվրոպայի խորհրդի տարբեր փաստաթղթեր [76]:

Հակակոռուպցիոն ոլորտում պրոֆիլային միջազգային և միջկառավարական կազմակերպություններն են G20 երկրները, Միավորված ազգերի կազմակերպությունն իր այնպիսի ստորաբաժանումներով, ինչպես, օրինակ՝ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը (UNODC), մասնագիտացված կազմակերպությունները, ներառյալ՝ Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան, Արժույթի միջազգային հիմնադրամը, ՏՀԶԿ-ը և Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը (FATF): Այս կազմակերպությունները գործում են ինստիտուցիոնալ դերակատարների հսկայական ցանցի շրջանակներում, որի մեջ են մտնում ազգային և ենթազգային կառավարություններ, միջազգային կառավարական այլ հաստատություններ և չափորոշիչներ սահմանող մարմիններ և ոչ կառավարական կազմակերպություններ (NGO): Գործընթացը օգուտներ է քաղում նաև կոռուպցիայի և կառավարման վերլուծության ոլորտում փորձ ունեցող կազմակերպություններից, ինչպիսիք են ուղեղային կենտրոնները և գործարար ասոցիացիաները:

Համաձայն UNCAC-ի գծով ստանձնած պարտավորությունների՝ ազգային մակարդակում պետությունները շարունակում են մշակել և իրականացնել Ազգային Գործողությունների պլանները հետևյալ հինգ ընդգրկուն ոլորտներում՝ կանխարգելում, քրեականացում և իրավակիրարկում, միջազգային համագործակցություն, ակտիվների վերադարձ, ինչպես նաև տեխնիկական աջակցություն և տեղեկատվության փոխանակում: Շահակիցների թվում են պետական ինստիտուտները (գործադիր, օրենսդիր և դատական) ազգային և ենթազգային մակարդակներում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ընկերությունները, արհմիությունները և այլ խմբերի ընդգրկուն շրջանակը: Այս շահակիցները հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործում կարող են ծառայել որպես կարևոր դաշնակիցներ ու գործընկերներ և նվազեցնել բարեփոխումների ջանքերի խոցելիությունը քաղաքական ղեկավարության փոփոխությունների դեպքում: Քանի որ կառուցողական կապիտալը վերաբերում է կապիտալի անդրսահմանային հոսքերին, իրավական համակարգը, որտեղ սկիզբ են առնում ներդրումները, կոռուպցիայի առաջարկի կողմի վրա իր ազդեցությամբ պայմանավորված ևս հաշվետվողականության կարևոր մեխանիզմ է:

Ինչպես արդեն նշվել է, ընկերություններն այս գործընթացի մասն են, այդ թվում՝ կաշառակերության և կոռուպցիայի վերաբերյալ ազգային օրենքների իրավակիրարկման միջոցով: Դրանք կարող են ենթարկվել արտատարածքային կարգավորումների, օրինակ՝ 1977թ.-ի ԱՄՆ Արտասահմանում կոռուպցիայի դեմ պայքարի մասին օրենքի և 2010թ.-ի Միացյալ Թագավորության Կաշառքի մասին օրենքի [77]: Թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Մեծ Բրիտանիան, ինչպես նաև քառասուներկու այլ պետություններ, հանդիսանում են ՏՀՀԿ-ի կաշառակերության դեմ պայքարի կոնվենցիայի կողմեր: Դրանք համաձայնել են միջազգային բիզնես գործարքներում իրավաբանորեն ստանձնել օտարերկրյա պետական պաշտոնյաների կաշառքը քրեականացնելու պարտավորություններ: Այսպիսով, ՏՀՀԿ-ի ինստիտուցիոնալ գործընթացները կարող են օգնել մասնավոր հատվածում ջանքերի իրագործմանը:

Գ. Հակակոռուպցիոն հաշվետվողականության կառուցակարգեր

Հաշվետվողականությունն ունի կարևոր նշանակություն կոռուպցիայի դեմ պայքարի և կառուցողական կապիտալի համար բարենպաստ միջավայր ձևավորելու համար: Այն ներառում է երեք առանցքային տարր՝ պատասխանատվության սահմանում, պատասխանատվություն (սուբյեկտների պարտավորությունը՝ տրամադրել տեղեկատվություն և բացատրել իրենց գործողությունները) և իրավակիրարկում (պատժամիջոցներ և կարգապահական գործողություններ՝ ներառյալ իրավական և նորմատիվ պատժամիջոցները): Ազգային համակարգերում գոյություն ունեն քաղաքացիների, օրենսդիր մարմինների, ֆինանսների և այլ նախարարությունների, կարգավորող մարմինների, դատական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի հաշվետվողականության բազմաթիվ հարաբերություններ, որոնք միմյանց հետ կապված են հսկողության, վերահսկողության, համագործակցության և հաշվետվությունների ցանցերի միջոցով: Թափանցիկությունը կարևոր է հաշվետվողականության ապահովման համար, և դա հանրային վերահսկողության համար պահանջում է տեղեկատվության հասանելիություն և պետական գործընթացների, վարույթների, փաստաթղթերի ու տվյալների բացում: Թափանցիկության դեպքում քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների կողմից կարող են կիրառվել հանրային վերահսկողության և մոնիթորինգի միջոցներ:

Առևտրային բազմաթիվ ընկերություններ արձագանքել են հակակոռուպցիոն օրենքներին՝ ամրապնդելով համապատասխանության իրենց ծրագրերը և ռիսկերի կառավարման ռազմավարությունները [78]: Դա ներառում է գրավոր քաղաքականությունների և վարքագծի չափանիշների մշակում, ուսուցումներ, ներքին մոնիթորինգի և աուդիտի ուժեղացում ու կարգապահական խիստ ընթացակարգերի սահմանում: Բացի այդ, ընկերություններն իրավախախտումների մասին հաղորդումները հեշտացնելու համար ներդնում են ազդարարման և բողոքարկման այլ կառուցակարգեր: Նման համապատասխանության ծրագրերը տարածվում են միջազգայնորեն գործող դուստր ձեռնարկությունների վրա ևս: Ընկերության գործունեության, առևտրային հարաբերությունների և մատակարարման շղթաների բոլոր ասպեկտներում դրանք կարող են նաև ներառել համապարփակ պատշաճ ուսումնասիրության գործընթացներ:

Անշուշտ, կոռուպցիոն պրակտիկայի կասկածների վրա հիմնված կառավարության իրավակիրարկման գործողությունները կարող են հանգեցնել զգալի տուգանքների

և հեղինակության վնասի: Ընկերությունների համար սա կորպորատիվ ռիսկերի կառավարման բաղադրիչ է: Սակայն ընկերությունները նաև հասկանում են կոռուպցիայի ավելի ընդգրկուն վնասները, ինչպես նաև կոռուպցիան նվազագույնի հասցնող էկոհամակարգի առևտրային օգուտները: Բարեվարքության մշակույթն ամրապնդելու համար նրանք համատեղ գործողությունների միջոցով համագործակցում են գործարար տարբեր ասոցիացիաների և բազմակողմ նախաձեռնությունների հետ [79]: Նման օրինակներից են Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը [80] և Համաշխարհային տնտեսական ֆորումի օրակարգը՝ հանուն գործարար բարեվարքության [81]: Սա նաև ընդգծում է արժեքներով առաջնորդվող մասնավոր հատվածի *անկյունաքարի* կարևորությունը:

Վերջապես, այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են կոռուպցիան և կառավարման դասիչները, հայտնի են և լայնորեն օգտագործվում են ամբողջ աշխարհում [82]: Դրանք սովորաբար բովանդակում են միավորներ, որոնք ներկայացնում են որակական բնութագրերին վերագրված քանակական արժեքներ, օրինակ՝ CIPE-ի ու Կոռուպցիայի դեմ պայքարի և պետականաշինության եվրոպական հետազոտական կենտրոնի կողմից 2022թ.-ին հրապարակված Կոռուպցիոն ռիսկերի կանխատեսումը: Դասիչները կարող են դիտվել որպես հաշվետվողականության կառուցակարգ, քանի որ դրանք ցույց են տալիս պետական քաղաքականության, օրենքների և իրավակիրարկման մշակույթի թերությունները: Դրանք հաճախ օգտագործում են քաղաքացիական հասարակության ինստիտուտները՝ հակակոռուպցիոն և կոռուպցիայի նվազեցման համար պատասխանատու ազգային պետական մարմինները՝ բարեփոխումների օրակարգով իրենց քարոզարշավներում, ինչպես նաև հակակոռուպցիոն նորմերը ջատագովող միջազգային կազմակերպությունները և դոնոր կառավարությունները: Դրանք կարող են նաև օգտակար լինել գործարար ռիսկերի գնահատման և որոշումների կայացման հարցում: Կրկին, նման դասիչները կարող են ծառայել որպես կառավարման բացերը հաղթահարելու գործիք ևս:

III. Ազդեցություն. կապեր ներդրումների և բարեվարքության հետ

Ա. Ընդհանուր ակնարկ

Ներդրումների, բարեվարքության և ազդեցության միջև կապերը բարձրացնում են կառուցողական կապիտալի առաջխաղացման վտանգների վերաբերյալ իրազեկությունը: Ազդեցության հայեցակարգը հզոր հասկացություն է, որն օգնում է սահմանել ցանկալի արդյունքների հասնելու համար որոշակի գործողությունների ազդեցության բնույթը: Այս բաժնում ներկայացվում են մասնավոր հատվածի պատկերացումները՝ ընդգծելով սոցիալական և բնապահպանական հարցերում դրական և բացասական ազդեցությունների բնույթը: Բաժնում ամփոփված է նաև զարգացման և ֆինանսական ինստիտուտների տեղեկատվությունը՝ կատարողականի չափորոշիչների վրա շեշտադրմամբ: Սա վկայում է, թե ազդեցության գնահատումն ինչպես կարող է բացահայտել կառուցողական կապիտալի ոլորտում գործողությունների հնարավոր մոդելները: Նախ, ազդեցության հարցերը վերափոխում են պատասխանատու գործարար պրակտիկայի բազմաթիվ ասպեկտներ, հատկապես ESG հրամայականի միջոցով: Երկրորդ, փոխվում են անդրսահմանային ներդրումների կառավարման և երկարաժամկետ

ներդրումների վերաբերյալ սպասումները: Օրինակ, ՏՀԶԿ-ը մշակել է FDI որակի ցուցանիշներ [83]: Ընդհանուր առմամբ, ազդեցության վրա հիմնված մոտեցումները զգալի փոփոխություններ են առաջացնում բոլոր ոլորտներում: Տնտեսագիտությունը վերագնահատում է արտաքին ազդեցությունների բնույթը: Միաժամանակ, տեխնոլոգիական նորարարությունները վերափոխում են չափումները, կառավարումը և ազդեցությունների հաշվետվությունները: Կառուցողական կապիտալի հայեցակարգը հնարավորություն է տալիս օգտվել նման զարգացումների առավելություններից:

Բ. Պատկերացումներ մասնավոր հատվածի ազդեցության վերաբերյալ

Մասնավոր հատվածում բնապահպանական և սոցիալական ազդեցությունները հիմնականում դիտարկվում են դրանց բացասական և դրական կողմերի տեսանկյունից: Չնայած պրակտիկայում ազդեցությունները միահյուսվում են, որպես կանոն, դրանք դիտարկվում են՝ հիմք ընդունելով տարբեր իրավական շրջանակներ և կառավարման գործիքներ: Ինչպես քննարկվում է ներքևում, սկսում են ի հայտ գալ ավելի ամբողջական մոտեցումներ, և կորպորատիվ կառավարումն ավելի ու ավելի էական դեր է խաղում:

1. Անդրադարձ բացասական ազդեցություններին

Բացասական ազդեցությունները կառավարելու խթանը, բացի ազգային օրենսդրությանը համապատասխանությունից, առաջ է գալիս ինստիտուցիոնալ թույլ կողմերի ճանաչումից, որոնք հաճախ հանդիպում են զարգացող, իսկ երբեմն էլ՝ հասուն շուկաներում: Ուստի անհրաժեշտություն կա լրացնել կառավարման նման բացերը: Մասնավոր հատվածի գործողությունների միջոցով դա անելու ձգտումը, որը համահունչ է համընդհանուր գլոբալ նորմերին, պատասխանատու գործարար վարքագծի բնութագրիչն է: Օրինակ, ֆինանսավորող կազմակերպությունները և բանկերն ունեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կառավարման երկար պատմություն: Սա և՛ համապատասխանության, և՛ ռիսկերի կառավարման խնդիր է, ներառյալ՝ ազդեցության գնահատման, վերլուծության, մոնիթորինգի և ճշգրտման բարդ համակարգերը: Կարգավորումների տարբեր մակարդակների ներքո գործող բազմազգ ընկերությունները բոլոր երկրներում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հետևողականորեն կառավարելու համար հաճախ ընդունում են իրենց չափորոշիչները:

Սոցիալական ազդեցությունների կառավարումը ներկայացնում է առանձին մարտահրավերների հավաքածու՝ հատկապես հաշվի առնելով, որ այն ներառում է իրար հետ ակնհայտորեն չկապված, մասնատված խնդիրների համախումբ՝ աշխատանքի պայմաններ, աշխատանքային իրավունք, մարդկային կապիտալ, բազմազանություն և ներառականություն, համայնքի հետ գործակցություն: Գործարար հատվածում մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքների (UNGPs) ընդունումը [84] և Բազմազգ ընկերությունների վերաբերյալ ՏՀԶԿ-ի ուղեցույցների վերանայումը [85] ողջունելի հստակություն բերեցին սոցիալական խնդիրների լուծման հարցում: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային շրջանակներում այս նախաձեռնությունները հիմնվում են նաև առկա գործարար ընթացակարգերի վրա: Հատուկ ուշադրության են արժանի մարդու իրավունքների պաշտպանության շուրջ զարգացումները: Ընկերություններին կոչ է արվում համակարգված կերպով բացահայտել, գնահատել և հետո կառավարել մարդու իրավունքների վրա իրենց

բացասական ազդեցությունները՝ ներառյալ մատակարարման շղթաներում և ավելի լայն գործարար հարաբերություններում: Եվրոպական մի քանի կառավարություններ և Եվրոպական Միությունը պարտադիր պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ օրենսդրություն ընդունելիս հիմնվում են ՄԱԿ-ի տնտեսական զարգացման ծրագրի և ՏՀՀԿ-ի առաջնորդող ուղեցույցների վրա [86]:

2. Անդրադարձ դրական ազդեցություններին

Մասնավոր հատվածի հնարավոր բացասական ազդեցությունների կառավարմանը զուգընթաց՝ կարևոր տեղաշարժեր կան դրական ազդեցությունների ուժեղացման ուղղությամբ: Սա դուրս է գալիս աշխատատեղերի ստեղծման, հարկերի վճարման կամ ազգային ՀՆԱ-ում ներդրումների ավանդական չափորոշիչներից և ներառում է այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են արտադրողականությունը, նորարարությունը և գենդերային հավասարությունը: Նման փոփոխության դրդապատճառը, գոնե մասամբ, ՄԱԿ-ի Կայուն զարգացման օրակարգի ընդունումն է: ԿՀՆ-ները սահմանում են գլոբալ նպատակներ, մինչդեռ լրացուցիչ վերլուծությունն ընդգծում է, թե որքան հեռու է աշխարհն այդ նպատակներին հասնելուց: Այդ բացերը լրացնելու և դրական ներդրումների մասին բանավեճն ընդլայնելու հարցում մասնավոր հատվածի համար բացվեց հայեցակարգային և գործնական նոր ուղի: Նորարարության օրինակ կարելի է գտնել Կամպալայի՝ Զարգացման նպատակներում մասնավոր հատվածի հետ արդյունավետ համագործակցության սկզբունքներում [87]: Ներկայիս նման երկխոսությունները կարող են գործարարության դերը կարևորել ջրամատակարարման և ջրահեռացման կամ կրթական հնարավորությունների ընդլայնման, կամ կայուն տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման, կամ սննդի թափոնների կրճատման հարցերում: 17 ԿՀՆ-ներն իրենց 169 թիրախների հետ միասին մասնավոր հատվածին ընձեռում են ինչպես կոնկրետ նպատակների համախումբ, այնպես էլ գործողությունների օրինականության զգացում: Այնուամենայնիվ, դրական ազդեցության չափումը նախկինի պես ուղեկցվում է մարտահրավերներով [88]:

Սա հարց է բարձրացնում, թե ինչ եղանակով կարելի է աշխարհի սոցիալական և բնապահպանական մարտահրավերները լուծելու համար մեծացնել մասնավոր կապիտալի հոսքերը: Ֆիդուցիար պարտականությունների կարգավորումները որոշակի սահմանափակումներ են դնում ներդրողների կողմից որոշումների կայացման վրա: *21-րդ դարում ֆիդուցիար պարտականությունների* վերաբերյալ Պատասխանատու ներդրումների սկզբունքները (PRI) ձեռնարկել են բազմամյա ուսումնասիրություն [89]: Ներդրողները կրում են ֆիդուցիար պարտականություններ ֆինանսապես էական գործոնները, ներառյալ՝ բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման գործոններով պայմանավորված ռիսկերը, ներդրումային որոշումներին ինտեգրելու հարցում: Բայց որո՞նք են կենսակայունության վրա ազդեցության հետևանքները: PRI-ի նախագծերից մեկը՝ *Ազդեցության իրավական հիմքերը*, ավարտվել է 2021թ.-ին [90]: Բազմաթիվ երկրների փորձի վրա հիմնված ընդարձակ զեկույցն անդրադառնում է ներդրողների որոշումների կայացման վրա կենսակայունության ազդեցությանը:

3. Ազդեցության ավելի ամբողջական մոտեցում

Ազդեցության հետ կապված գոյություն ունեն հայեցակարգային և գործնական բազմաթիվ մարտահրավերներ: Այնուամենայնիվ, հարկ է նշել երկու նախաձեռնություն, որոնք միավորում են թե՛ դրական և թե՛ բացասական ազդեցությունները, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական գործոնները:

Նախ, ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի ֆինանսական նախաձեռնությունը (UNEP-FI) մշակել է Դրական ազդեցությամբ ֆինանսավորման սկզբունքների շարք [91]: Դրական ազդեցությամբ գործարարությունը և ֆինանսները սահմանվում են որպես «այն, ինչ ծառայում է կայուն զարգացման երեք սյուներից (տնտեսական, բնապահպանական և սոցիալական) մեկում կամ մի քանիսում դրական ներդրմանն այն բանից հետո, երբ սյուներից որևէ մեկի վրա հնարավոր բացասական ազդեցությունները պատշաճ կերպով բացահայտվել և մեղմացվել են»: Ներառական սահմանումը ենթադրում է, որ այս նախաձեռնությունը կարող է հնարավոր կիրառություն ունենալ *Կառուցողական կապիտալի հայեցակարգում*: Այն արդիական է տնտեսության բոլոր ոլորտների և ֆինանսավորման բոլոր տեսակների համար: Ավելին, նախաձեռնությունը պնդում է, որ «ներդրումային շղթայի վրա ազդեցության վերաբերյալ ընդհանուր ըմբռնումն անհրաժեշտություն է, որպեսզի հնարավորություն ընձեռվի ֆինանսներին և դրա պետական ու մասնավոր շահակիցներին վերլուծել, կառավարել և ներգործել ողջ տնտեսության վրա»: Երկրորդ կարևոր զարգացումը գալիս է Եվրոպական Միությունից, որը կայուն ֆինանսների վերաբերյալ սկսել է խոշոր նախաձեռնություն [92]: Կարգաբանությունը (Տաքսոնոմիան) դասակարգման մեթոդ է, որը կօգնի ներդրողներին, ընկերություններին, թողարկողներին և նախագծեր նախաձեռնողներին անցում կատարել դեպի ցածր ածխածնային, ճկուն և ռեսուրսաարդյունավետ տնտեսություն [93]: Ճյուղերի լայն շրջանակի համար Կարգաբանությունը սահմանում է տնտեսական գործունեության կատարողականի շեմեր, որոնք պետք է բավարարեն «կայուն» համարվելու պայմաններին: Կարգաբանության առանցքը համալիր ազդեցության մոտեցումն է: Ծրագրերը չեն որակվի «կայուն», քանի դեռ չեն ապացուցել, որ ի լրումն շրջակա միջավայրի վրա դրական ազդեցության՝ դրանք էական վնաս չեն հասցնում այլ բնապահպանական նպատակների: Ավելին, դրանք պետք է նաև համապատասխանեն սոցիալական նվազագույն երաշխիքներին՝ վկայելով UNGP-ի և ՏՀԶԿ-ի ուղեցույցներին իրենց համապատասխանությունը:

Գ. Պատկերացումներ զարգացման և ֆինանսական հաստատությունների ազդեցության վերաբերյալ

Կառուցողական կապիտալի ամրապնդման և քայքայող կապիտալի նվազեցման ռազմավարությունները կարող են կարևոր դասեր քաղել համաշխարհային տնտեսական կառավարման տարբեր ինստիտուտների գործունեությունից: Դրանք վերաբերում են FDI հոսքերին, ինչպես նաև տեղական կապիտալի շուկաներում մասնավոր ներդրումներին: Այս *Հայեցակարգի* նպատակներին համահունչ՝ նման պատկերացումները կարող են նպաստել մասնավոր հատվածի զարգացմանը և խթանել ավելի բարձր սպասումները պատասխանատու գործարար վարքագծից: Ավելի լայն իմաստով, զարգացման և ֆինանսական հաստատությունների առաքելությունները կարող են ծառայել *կառուցողական կապիտալի անկյունաքարերում*

արտացոլված սկզբունքների ամրապնդմանը: Այստեղ ներկայացվում են ազդեցության հետ կապված նախաձեռնությունների չորս օրինակներ:

Նախ, պետականորեն ֆինանսավորվող զարգացման ֆինանսական ինստիտուտները, ինչպիսիք են Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD), զգալի փորձ ունեն ESG-ի չափորոշիչների կատարողականի կառավարման հարցերում: Ֆինանսավորում ստանալու համար հաճախորդները երկար տարիներ պետք է համապատասխանեն կատարողականի նման չափորոշիչներին [94]: Չափորոշիչները հաճախորդներից պահանջում են կառավարել իրենց բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները՝ դրանով իսկ սահմանափակելով ռիսկերի ենթարկվելը: Մասնավոր բանկերն ավելի հաճախ են ընդունում բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգված և ընդհանուր մոտեցման առավելությունները: Դրանք ընդունել են IFC-ի կատարողականի չափորոշիչները՝ ի դեմս Էկվադորի սկզբունքների, որոնք առաջին անգամ գործարկվել են 2003թ.-ին և վերջին անգամ թարմացվել 2020թ.-ին [95]:

Երկրորդ, ազդեցության գնահատման ոլորտը պայմանավորված է նաև ընկերությունների կողմից ոչ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ ներկայացնելու աճող պահանջարկով: Օրինակ, IFC-ը և EBRD-ն աշխատում են ֆոնդային բորսաների ու կարգավորող մարմինների հետ՝ տեղական կապիտալի շուկաներն ամրապնդելու և ձեռնարկություններին երկարաժամկետ ֆինանսավորման հարցերում օգնելու համար [96]: Նման շուկաները խրախուսում են «նորարարությունը խթանող և աշխատատեղերի ստեղծումն ու տնտեսական աճն արագացնող ձեռնարկատիրական ռիսկերը» [97]: Տեղական կապիտալի շուկաները կարող են նաև պաշտպանել տնտեսությունները միջազգային ֆինանսական շուկաների ապակայունացնող տատանումներից: Դրանք առանձնահատուկ քայքայող ռիսկեր են, որոնց անդրադարձ է կատարվել վերևում՝ ներդրումների մասին 1-ին բաժնում: IFC-ն ընդունում է կորպորատիվ արժեքի գործոններում տեղի ունեցող փոփոխությունները և հիմնվելով իր համաշխարհային փորձի և գործընկերության վրա՝ մշակել է *Տեղեկատվության բացահայտման և թափանցիկության համապարփակ գործիքակազմ* [98]: Ուղեցույցը վերաբերում է *Կառուցողական կապիտալի հայեցակարգին*՝ ընդգծելով ճշգրիտ և ստուգված տեղեկատվության կարևորությունը ներդրումային որոշումների կայացման համար: *Գործիքակազմի* նպատակն է օգնել զարգացող շուկաների պատասխանատու ընկերություններին կապ հաստատել ինստիտուցիոնալ ներդրողների հետ: Այս ռեսուրսի անվանումն արտացոլում է ազդեցության այդ միտումը՝ *Հաշվեկշռից այն կողմ (Beyond the Balance Sheet)*:

Երրորդ, այս *Հայեցակարգի* համար կարևոր թեմա է Կայուն զարգացման օրակարգում առաջընթացը: ԿՁՆ-ների իրականացման կարևոր հիմքը ՄԱԿ-ի՝ ֆինանսավորում զարգացման համար (FfD) աշխատանքներն են [99]: Ֆինանսական հոսքերն ու քաղաքականությունները տնտեսական, սոցիալական և բնապահպանական առաջնահերթություններին համապատասխանեցնելու համար այն նպատակ ունի ապահովել համալիր մոտեցում: FfD-ի ջանքերի շուրջ համաշխարհային կտրվածքով համախմբվել են պետական և մասնավոր հատվածի ֆինանսական գործիչներ: Այդ ջանքերը ներկայումս հատվում են կանաչ ֆինանսների և կայուն ներդրումների շարժման

հետ [100]: *Կառուցողական կապիտալի հայեցակարգը* կարող է խթանել կառավարման համակարգերի հետ կապված կապիտալի հոսքերի ուսումնասիրությունը: Ֆինանսների, ներդրումների կառավարման, բանկային և կապիտալի շուկաներում դեպի ազդեցությունը կողմնորոշված բազմակողմ համագործակցությունն առաջարկում է ներգրավվածության նոր հնարավորություններ [101]: Ավելին, FfD-ի թեման գտնվում է յուրաքանչյուր տարածաշրջանում բարձր մակարդակի գլոբալ հավաքների ուշադրության կենտրոնում:


Վերջինը, 2021թ.-ի նոյեմբերին Լոնդոնում մեկնարկեց նոր կարևոր գլոբալ համագործակցություն՝ *Ազդեցության կառավարման հարթակը* [102]: Այն հիմնված է Ազդեցության կառավարման նախկին ծրագրի՝ ֆորումի վրա, որը գործել է 2016-2021թթ.: Կենտրոնանալով կայունության ազդեցությունների կառավարման վրա՝ այն միավորում է համաշխարհային տնտեսության կառավարման հիմնական ինստիտուտները, այդ թվում՝ UNGC, OECD, IFC, UNDP և UNEP-FI: Հարթակի միջոցով գործընկեր կազմակերպությունները ձգտում են պարզաբանել ազդեցության կառավարման նշանակությունը և գործելաճը, աշխատել ֆունկցիոնալ համատեղելիության վրա և ըստ անհրաժեշտության լրացնել բացերն ու համակարգված երկխոսություն վարել քաղաքականություն մշակողների հետ:

Թեև կայքի առաջնային հասցեատերերն են հանրային և մասնավոր հատվածների ազդեցության գծով մասնագետները, դրա օգտագործումը քաղաքականություն մշակողների, կարգավորող մարմինների, գիտնականների և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ևս կարևորվում է: Բացի այդ, այն նպատակ ունի պահպանել իր արդիականությունն ընկերությունների լայն շրջանակի (բազմազգից մինչև փոքր և միջին տեղական ձեռնարկություններ), ինչպես նաև ներդրողների համար (IFI-ներից մինչև հիմնական ֆինանսական հաստատություններ): Գործողությունների հիմնական համախումբն արտացոլում է ձևավորվող համաձայնությունն առ այն, թե ինչպես կարող են կազմակերպությունները կառավարել կայունության ազդեցությունները՝ դրանք ֆինանսական կատարողականին ինտեգրելով [103]: Ռեսուրսները ներառում են կազմակերպությունների, չափորոշիչների, շրջանակների և գործիքակազմերի աճող ցանկը [104]:

Ընդհանուր առմամբ, ինչպես մասնավոր հատվածի, այնպես էլ համաշխարհային զարգացման ինստիտուտների պատկերացումները կարող են կապեր ձևավորել ներդրումների, բարեվարքության և ազդեցության միջև: Սրանք առնչվում են ինչպես FDI-ի, այնպես էլ FPI-ի հոսքերի հետ: Նման մոտեցումը կարող է օգնել հաղթահարել կառավարման բացերը և ամրապնդել կառուցողական կապիտալը: Զեկույցի հաջորդ մասում քննարկվում են պատասխանատու բիզնեսի և ներդրումների աջակցության միտումները: Ազդեցությունը կրկին լինելու է առանցքային բնութագրիչը՝ հատկապես հաշվի առնելով պատշաճ շրջահայացության ակնկալիքները և ESG ներդրումների աճը:

ՕՈւՆ-ների հոսքեր
(ԱՄՆ դոլար)


2020թ.-ի դրությամբ ՕՈւՆ-ների հոսքերը նշանակալիորեն նվազել են, քանի որ համավարակն էլավելի խորացրեց դրանց անկման արդեն իսկ նկատելի տեմպերը. համաշխարհային ՀՆԱ-ում 2007թ.-ի 5%-ի համեմատ ՕՈւՆ-ների հոսքերը 2019թ.-ին կազմել են 1.7%:



Տվյալները՝ UNCTAD Global Investment Trends Monitor


ՕՈւՆ-ների հոսքերն ըստ տարածաշրջանների (ԱՄՆ դոլար)

2020թ.-ի ավարտին և 2021թ. տարեսկզբին ՕՈւՆ-ների հոսքերն ավելացան՝ զարգացող երկրներում ներդրումների աճի շնորհիվ



Համաշխարհային մասնավոր ներդրումները ԿԶՆ-ների ոլորտում զարգացող տնտեսություններում (ԱՄՆ դոլար)

Համավարակի շրջանում զարգացող տնտեսություններում ՕՈւՆ-ներն աճել են էլեկտրաէներգիայի և վերականգնվող էներգիայի և նվազել հեռահաղորդակցության, կրթության և սննդի ոլորտներում



Տվյալները՝ UNCTAD Global Investment Trends Monitor

Մաս չորրորդ. Աջակցող միտումները պատասխանատու բիզնեսում և ներդրումներում

CIPE-ի *Կառուցողական կապիտալի հայեցակարգում* բիզնեսի դերն առանցքային է՝ տնտեսական, քաղաքական և սոցիալական ավելի լայն համատեքստում: Պատասխանատու բիզնեսի և ներդրումների փոփոխվող պարամետրերը՝ սոցիալական սպասումների տեղաշարժերի հետ մեկտեղ, առաջարկում են ներգրավվածության և ազդեցության նոր հեռանկարներ:

Նման զարգացումները թե՛ տեսականորեն և թե՛ գործնականում կարող են ձևավորել կառուցողական կապիտալի ռազմավարությունը: Ինչպես նշվել է երկրորդ մասում, արժեքային կողմնորոշում ունեցող մասնավոր հատվածը կառուցողական կապիտալի անկյունաքարերից է: Այստեղ նկարագրված աջակցող միտումներն ամրապնդում են այդ մոտեցումը: Դրանք նաև ընդգծում են ներդրումների, բարեվարքության և ազդեցության միջև կապը, հատկապես ESG ռազմավարության միջոցով:

I. Համատեքստ

Պատասխանատու մասնավոր հատվածը կարող է իր կայուն ներդրումն ունենալ կառուցողական կապիտալի ամրապնդման և քայքայող կապիտալի կրճատման գործում: Որպես նախապատմություն՝ հակիրճ նկարագրվում է ինչպես պատասխանատու բիզնեսի, այնպես էլ պատասխանատու ներդրումների էվոլյուցիան: Այս շարժումները որոշումների կայացման և կապիտալի բաշխման ուժով պայմանավորված էականորեն համընկնում են:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ծրագրերը, որոնք մշակվել են բիզնեսի համապատասխանության և էթիկայի ծրագրերին զուգահեռ, ի սկզբանե հիմնված են եղել համայնքի հետ գործակցելու և բարեգործական ջանքերի վրա [105]: 2000թ.-ին ՄԱԿ-ն առաջարկեց Համաշխարհային պայմանագիր նախաձեռնությունը, որի շրջանակում բիզնեսի ուշադրությունը կենտրոնանում է մարդու իրավունքների, աշխատանքային պայմանների, բնապահպանական միջոցառումների և կոռուպցիայի դեմ պայքարի կամավոր պարտավորությունների վրա [106]: Բազմաշահառու այլ նախաձեռնությունները ևս արձագանքեցին համապատասխան մի շարք թեմաների և ոլորտների՝ բարձրացնելով չափորոշիչները և խրախուսելով ընկերությունների հաշվետվողականությունը: Կորպորատիվ պատասխանատվությունը սկսեց բնութագրվել որպես ռիսկերի կառավարման և բացասական ազդեցությունների մեղմացման, և ի վերջո, դրական հնարավորությունների բացահայտման միջոց: Կորպորատիվ պատասխանատվությունն այժմ ներառում է կենսակայունության հարցերի ավելի լայն շրջանակ [107]: Այն ուղղորդում է բազմազգ մատակարարման շղթաների վրա ազդող ընկերության արժեքների, ռազմավարությունների և գործառնությունների բազմաթիվ ասպեկտներ:

Պատասխանատու ներդրումները ծագել են 1970-ականների «սոցիալապես պատասխանատու ներդրումային» նախաձեռնություններից [108]: Սա դարձել է հիմնարար ուղղություն և այժմ վերափոխում է կորպորատիվ պատասխանատվության շարժումը: 21-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում կորպորատիվ

պատասխանատվության օրակարգը կենտրոնացած էր կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի կայունության, աղքատության և զարգացման, ինչպես նաև աշխատանքի և մարդու իրավունքների վրա: Այս տեսակետը շարունակվեց վերջին տասնամյակում՝ չնայած կլիմայական ճգնաժամի ուժեղացման, անհավասարության ընդլայնման և մարդու իրավունքների խախտումների շարունակման: Քննադատներն անհամապատասխանություններ են դիտարկում կորպորատիվ քաղաքականության և գործողությունների, պարտավորությունների և հետևանքների միջև:

Միաժամանակ ի հայտ եկավ տեսակետ, համաձայն որի՝ ներդրողների կողմից համախմբված և ֆինանսական շուկաներում տեղաբաշխված կապիտալը կարող է դառնալ առաջընթացի բանալի: Դա կարող է բերել ակտիվների վերաբաշխման, ինչպես նաև անմիջական ներգրավվածության և հրապարակային ընկերություններում բաժնետերերի շահերի պաշտպանության: Ինստիտուցիոնալ ակտիվների սեփականատերերը և կառավարիչները, ինչպես նաև բարեկեցության որոշ սուվերեն ֆոնդեր ներդրումային որոշումներ կայացնելիս և կատարողականը գնահատելիս սկսեցին ESG գործոնները դիտարկել որպես էականորեն կարևոր: Սա բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման գործոններով պայմանավորված հիմք դրեց «ESG ներդրումների» համար: Ինչպես քննարկվում է ստորև, ակտիվների տարբեր դասերի հիմնական ներդրողներն աստիճանաբար ընդունեցին այս օրակարգը: Օրինակ, JP Morgan-ը գնահատում է, որ ESG սկզբունքներին առնչվող ակտիվները շուտով կարող են կազմել համաշխարհային կտրվածքով կառավարվող ակտիվների 44%-ը [109]:

Այս համատեքստում զեկույցի չորրորդ մասը ներառում է չորս զարգացումներ՝ բիզնես և մարդու իրավունքներ, պատշաճ շրջահայացության նախաձեռնություններ, պատասխանատու ներդրումներ և ESG, ԿՁՆ 16 և տրանսֆորմացիոն կառավարում:

II. Բիզնեսը և մարդու իրավունքները

ՄԱԿ-ի՝ 2011թ. հաստատված Բիզնեսի և մարդու իրավունքների առաջնորդող սկզբունքները (UNGPs) առաջին անգամ ձևավորեցին բիզնեսի և մարդու իրավունքների վերաբերյալ համաշխարհային ճանաչում ունեցող չափանիշ [110]: UNGP-ները սահմանում են մարդու իրավունքները պաշտպանելու պետության պարտականությունները, կորպորատիվ պատասխանատվությունը պահպանելու մարդու իրավունքները և գործարար հարաբերություններում ապահովելու մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներին հասանելիությունը:

UNGP-ներն ուժեղացվել են համաշխարհային և տարածաշրջանային բազմաթիվ այլ չափանիշներով և շրջանակներով: Հատկանշական է, որ ՏՀԶԿ-ը մարդու իրավունքները հարգելու գործարար պատասխանատվությունը և պատասխանատու գործարարությամբ զբաղվելու համար պատշաճ շրջահայացությունը ներառել է բազմազգ ընկերություններին առաջնորդող սկզբունքներում [111]:

UNGP-ները չեն պարտադրում պետական կարգավորման հատուկ ձև, որը կիրառելի է իրենց տարածքում կամ դրանից դուրս գործող ընկերությունների համար: Փոխարենը, դրանց իրականացումը հիմնված է միջոցառումների «խելամիտ համադրման» վրա՝ ապահովելու, որ պետությունները կկատարեն բիզնեսի կողմից մարդու

իրավունքների խախտումները կանխելու և վերացնելու իրենց պարտականությունները, և կերաշխավորեն, որ ընկերությունները կատարում են մարդու իրավունքները հարգելու իրենց պարտականությունները՝ ներառյալ պատշաճ շրջահայացությունը [112]: Այդպիսի միջոցառումների թվում են օրենսդրությունը, կարգավորումները, քաղաքական երաշխավորությունները, աջակցությունն ընկերություններին, ինչպես նաև խթանները [113]: Սպասվում է, որ խոշոր բազմազգ ընկերությունները կստեղծեն մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականություններ և հաշվետու կլինեն դրանց գործնական կիրարկման վերաբերյալ [114]: Ընդհանուր առմամբ, ընկերությունների բացահայտումները ենթակա են ավելի մանրակրկիտ ստուգման: Ի հայտ են եկել նաև մարդու իրավունքների կողմնորոշմամբ մի քանի կորպորատիվ հենանիշեր, որոնք պարզաբանում են ոլորտային ռիսկերը և դրանց հետ կապված հարցերը [115]: Չնայած այդ նախաձեռնությունները համեմատական վերլուծության առումով կողմնորոշված են դեպի ընկերությունները և մի շարք շահակիցները, կարող են օգտակար լինել նաև ներդրողների համար:

Հաստատումից տասնամյակներ հետո UNGP-ները կիրառվել են կառավարությունների, ընկերությունների և քաղաքացիական հասարակության բազմաթիվ կազմակերպությունների կողմից [116]: Արդյունքում պատշաճ շրջահայացությունն ընկերությունների համար դարձել է մարդու իրավունքների նկատմամբ հարգանք ցուցաբերելու և ռիսկերը կառավարելու կարևոր միջոց: Շահակիցների ճնշումները շարունակում են աճել, ընդ որում՝ ոչ միայն մուսքային ռեսուրսների, այլև կատարողականի վրա: Ավելին, բազմազգ կորպորացիաներից սպասումները տարածվում են նաև դրանց մատակարարների վրա, հատկապես՝ աշխատատար ոլորտներում: Սա սրում է ուշադրությունը հարկադիր և երեխաների աշխատանքի, մարդկանց թրաֆիքինգի և ժամանակակից ստրկության խնդիրների վրա: Միաժամանակ, համաշխարհային մատակարարման շղթաներում համապատասխանության աճող սպասումները կարող են խնդիրներ ձևավորել տեղերում: Զարգացող շուկաներում CIPE-ի գործունեությունը հաստատում է բիզնեսին կրթելու և ձեռնարկություններին աջակցելու անհրաժեշտությունը՝ ռիսկերը նվազագույնի հասցնելու գործնական քայլերում և դրանց գործառնությունները պաշտպանելու հարցերում:

Վերջապես, բիզնեսի և մարդու իրավունքների հարցերը սովորաբար դիտարկվում են շրջակա միջավայրի և կլիմայական խնդիրներից զատ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով կլիմայական աճող ճգնաժամը՝ մարդու իրավունքների վրա դրա ազդեցությունները դառնում են բանավեճի առարկա: Կլիմայական արդարադատության օրակարգն ընդգծում է անհամաչափ ազդեցությունները գլոբալ Հարավում, ինչպես նաև թե՛ հարուստ և թե՛ աղքատ երկրների աղքատ համայնքներում [117]: Այսպիսով, ընկերությունները սկսում են բացահայտել և կառավարել իրենց բնապահպանական և կլիմայական ազդեցությունները անհավասարության և սոցիալական անարդարության պրիզմայի միջով:

III. Պատշաճ շրջահայացության նախաձեռնություններ

Մարդու իրավունքների, ինչպես նաև բնապահպանական հարցերում պատշաճ շրջահայացության հարցը կապված է կորպորատիվ ռիսկերի կառավարման հետ: Պատշաճ շրջահայացության և բացահայտման պահանջների ուժեղացման նկատմամբ հետաքրքրությունն աճում է տարբեր երկրներում: Սրա վրա ազդել են UNGP-ների բնապահպանական ծրագրերը: Էական է նաև կոնկրետ խնդիրների առնչությամբ պարտադիր բացահայտումների և թափանցիկության վերաբերյալ գործող օրենսդրությունը: Օրինակներից են կոնֆլիկտային հանքանյութերը և ժամանակակից ստրկությունը: Այնպիսի ռեսուրսները, ինչպիսիք են ՏՀԶԿ-ի օգտակար հանածոների մատակարարման պատասխանատու շղթայի պատշաճ ուսումնասիրության և ՏՀԶԿ-ի պատասխանատու գործարար վարքագծի պատշաճ շրջահայացության ուղեցույցները, օգնում են ընկերություններին բացահայտել և կառավարել իրենց ռիսկերը, ինչպես նաև համապատասխանել կարգավորման պահանջներին [118]:


Համապատասխանության ծախսերով և վարչական բեռով մտահոգված որոշ ընկերություններ և ոլորտային ասոցիացիաներ ի սկզբանե դեմ էին նման բացահայտումներին: Ժամանակի ընթացքում նրանք ստացան գործարարների աջակցությունը՝ օգնելու ուժեղացնել մատակարարման շղթայի վերահսկողությունը և մարդու օրինական իրավունքների ու բնապահպանական խնդիրների ռիսկերի կառավարումը: Այնուամենայնիվ, բազմազգ կորպորացիաների և տեղական ձեռնարկությունների միջև դեռևս կա գիտելիքների և կարողությունների մեծ բաց, որը պետք է վերացվի, հատկապես՝ զարգացող և սահմանային շուկաներում: Առանձին կարգավորող մարմիններ, ներդրողներ, ակտիվիստներ և այլ շահակիցներ բարձր են գնահատում բացահայտումների արդյունք հանդիսացող թափանցիկության ու հաշվետվողականության աճը: Այնուամենայնիվ, սա մատնանշում է քայքայող կապիտալի ռիսկի հետ կապված մեկ այլ մարտահրավեր: Այս հարցերի շուրջ գլոբալ համաձայնություն չկա: Որոշ երկրներ թույլ են տալիս, իսկ որոշ դեպքերում նույնիսկ խրախուսում են ընկերություններին ոչ արդար մրցակցային առավելություն ստանալու համար գործել այլ սկզբունքների համաձայն:

Թերևս որոշ երկրներ ընդունել կամ քննարկում են օրենսդրական կարգավորումների ընդունումը, հարկ է նշել մեկ նշանակալի օրինակ: Ակնկալվում է, որ մինչև 2024թ. ԵՄ-ը կընդունի մարդու իրավունքների և բնապահպանական խնդիրների վերաբերյալ պատշաճ շրջահայացության պարտադիր պահանջներ: Դրանք կտարածվեն մեծության և շրջանառության որոշակի շեմերը գերազանցող ԵՄ ընկերությունների, ինչպես նաև նմանատիպ ոչ ԵՄ ընկերությունների վրա, որոնք ակտիվ են ԵՄ-ում [119]: ԵՄ Կայուն կորպորատիվ կառավարում կոչվող նախաձեռնությունը հետհամավարակային վերականգնման փաթեթի և աճի ծրագրի մաս է, ինչպես նաև կլիմայի փոփոխության արձագանք: Հարկ է նշել, որ կայուն ֆինանսավորման այս հավակնոտ փաթեթի այլ դրույթները՝ ներառյալ կայուն ներդրումների կարգաբանությունը և կորպորատիվ կենսակայունության հաշվետվությունները, կառուցողական կապիտալի համար ևս կարևոր են [120]:

Նման նախաձեռնությունները կարող են արագացնել բնապահպանական և մարդու իրավունքների պատշաճ շրջահայացության վերաբերյալ օրենսդրության ընդունումն այլ երկրներում ևս: Ավելին, եթե մատակարարման շղթաներում գտնվող ընկերությունները ցանկանում են համաշխարհային բիզնեսի համար լինել գրավիչ գործընկեր, կխրախուսվեն կատարել քաղաքականությունների ընդունման և թափանցիկության ապահովման իրենց պարտավորությունները, ներդնել պատշաճ շրջահայացության համակարգեր և բողոքարկման կառուցակարգեր: Միաժամանակ, ESG-ի ակնհայտ տարրերը կլինեն ավելի ինտեգրված, և G-ն ավելի ակտիվորեն կկիրառվի E-ի և S-ի նկատմամբ այնքանով, որքանով արժեշրջայի ընկերությունները շարժվում են բնապահպանական և սոցիալական խնդիրների կառավարումն ուժեղացնելու ուղղությամբ: Տեղեկատվության բացահայտման պարտադիր պահանջներով պայմանավորված՝ ընկերություններն ավելի հետևողական կդառնան ESG-ի տվյալների հաշվետվողականության հարցում: Այնուամենայնիվ, շատ ընկերություններ մտահոգված են նման պահանջներով և դրանցով պայմանավորված գործառնական ծանրաբեռնվածությամբ:

Կարգավորող մարմինները պետք է հաշվի առնեն պատշաճ շրջահայացության պարտավորությունները և խորհրդակցեն գործարար համայնքի հետ: Նման ջանքերի հետ կապված ռիսկերի արդյունավետ կառավարումը և թափանցիկությունը կարող են աջակցել կառուցողական կապիտալի հոսքերի ակտիվացմանը և քայքայող կապիտալի արմատախիլ անելուն:

Պատասխանատու ներդրումների աճը 2006-2021թթ.



Տվյալները՝ unpri.org

IV. Պատասխանատու ներդրումներ և ESG

Ա. Ընդհանուր ակնարկ

«ESG ներդրումներ» եզրույթը վերաբերում է ներդրումային որոշումներում բնապահպանական, սոցիալական և կառավարման գործոնները զուտ ֆինանսական գործոնների հետ մեկտեղ դիտարկելուն [121]: Բնապահպանական գործոնները կենտրոնանում են կլիմայի փոփոխության, թունավոր արտանետումների, հողի և ջրի, կենսաբազմազանության և անտառահատումների վրա: Սոցիալական գործոնները վերաբերում են աշխատանքի պայմաններին և մարդու իրավունքներին, տեղական համայնքներին և անհավասարության ու խտրականության խնդիրներին: Կառավարման գործոնները՝ կորպորատիվ խորհուրդներին, գործադիր ղեկավարության և բաժնետերերի դերերին ու պարտականություններին (հանրային ընկերությունների համար), ինչպես նաև համապատասխանության և ռիսկերի կառավարման գործընթացներին: Ընդհանուր առմամբ, ESG ներդրումները ձգտում են գնահատել կորպորատիվ կատարողականն այս երեք խումբ գործոնների միջոցով՝ ներդրումային որոշումները հիմնավորելու, ռիսկերը նվազեցնելու և երկարաժամկետ, այլ ոչ կարճաժամկետ կատարողականը բարձրացնելու համար:

ESG-ի համար վաղ ազդակը դարձավ 2005թ.-ի ՄԱԿ-ի նախաձեռնությունը, որի շրջանակներում աշխարհի խոշորագույն ինստիտուցիոնալ ներդրողների խումբը ստեղծեց Պատասխանատու ներդրումների սկզբունքները (Principles for Responsible Investment, PRI) [122]: Սկզբունքները ստորագրած ներդրողները պարտավորվում են պահպանել դրանք՝ ESG խնդիրները ներդրումային վերլուծության և որոշումների կայացման գործընթացներում ինտեգրելու և որպես ակտիվ սեփականատեր հանդես գալու համար: Այժմ PRI նախաձեռնությունը՝ ՄԱԿ-ի շարունակական աջակցությամբ, անկախ կազմակերպություն է: Այն իրականացնում է հետազոտություններ և առաջարկում է մի շարք ռեսուրսներ ու ներգրավվածության հնարավորություններ: 2021թ.-ի դրությամբ PRI-ին միացել են ավելի քան 3800 անձինք, որոնք կառավարում են մոտ 121 տրիլիոն ԱՄՆ դոլարի ակտիվներ [123]:

Ամբողջ աշխարհում ընկերությունների այս ծածկույթը նոր հնարավորություններ է ստեղծում բնապահպանական և սոցիալական առաջնահերթությունները բարձրացնելու, ռիսկերը մեղմելու և կորպորատիվ կառավարումը բարելավելու համար: Այնուամենայնիվ, ESG ներդրումները դեռևս մնում են որպես զարգացող ոլորտ: Չափորոշիչները դեռ հետևողական չեն, և դժվար է գնահատել ընդհանուր ազդեցությունը: Իհարկե, CIPE-ն ընդունում է ESG օրակարգի աճող նշանակությունը, ինչպես նաև դրա ներուժը կառուցողական և քայքայող կապիտալների հետ կապված, և ակտիվորեն զբաղվում է նման խնդիրներով, հատկապես՝ զարգացող և սահմանային շուկաներում [124]:

Բ. Ընկերության ներգրավվածություն

ESG-ի կարևոր հարցերից են ընկերության ներգրավվածությունը և բաժնետերերի շահերի պաշտպանությունը: Թեև ESG ներդրումների շուկայում շարունակում են գերակշռել Հյուսիսային Ամերիկյան և հատկապես Եվրոպան, այն արագորեն աճում է նաև Ասիական Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Ֆոնդային բորսաները, որոնք կարող են զգալիորեն ազդել մեծ թվով ընկերությունների ինքնակառավարման վրա, նույնպես ավելի ու ավելի են ներգրավվում ESG օրակարգում: Որպես Կայուն Ֆոնդային բորսաներ (SSE) նախաձեռնության մաս՝ մի քանի բորսաներ ցուցակված ընկերությունների համար սկսել են իրականացնել ESG ուղղորդման ծրագրեր [125]:

ESG ներդրումների աճն առաջին հերթին պայմանավորված է ESG ֆոնդերի շարունակական երկարաժամկետ կատարողականով, ինչպես նաև հիմնական ներդրողների աճող համոզմամբ, որ ESG գործոններն ունեն էական նշանակություն ֆինանսական արդյունքների համար: Այնուամենայնիվ, համաձայն UNGP-ների և ՏՀԶԿ-ի Բազմազգ ընկերությունների առաջնորդող ուղեցույցի՝ ինստիտուցիոնալ ներդրողների համար աճում է նաև այն, որ ներդրողները կիսում են իրենց ներդրումների ազդեցության համար պատասխանատվությունն այն ընկերությունների գործունեության միջոցով, որտեղ նրանք ներդրումներ են կատարում: ԵՄ-ը վերասահմանել է ինստիտուցիոնալ ներդրողների՝ որպես ֆինանսական սուբյեկտների դերը՝ պահանջելով բացահայտել ներդրումային որոշումների բացասական բնապահպանական և/կամ սոցիալական ազդեցությունների ուղղությամբ դրանց կողմից ձեռնարկվող քայլերը [126]:

ESG ներդրումների ընդլայնումը արտացոլվում և ամրապնդվում է պորտֆելային ընկերությունների հետ գործակցելու համար ներդրողների կողմից կիրառվող մոտեցումներում: Ներդրողների ներգրավվածության ռազմավարությունները ներառում են ընկերության ղեկավարության հետ երկխոսությունը, բաժնետերերի կողմից որոշումների կայացումը և լիազորագրով քվեարկությունը, բազմաթիվ շահակիցների մասնակցությամբ չափորոշիչների սահմանումը, իսկ հազվադեպ դեպքերում՝ ակտիվների վաճառքը: Կառավարման գերակայությունների և ներգրավվածության առումով առաջատար համարվող BlackRock-ը 2022թ.-ի հունվարի դրությամբ հրապարակեց տեղեկատվություն իր կառավարման ներքո գտնվող 10 տրիլիոն ԱՄՆ դոլար կազմող ռեկորդային ակտիվների մասին [127]: Անհրաժեշտ է նշել նաև Net Zero-ի մասին Glasgow Financial Alliance-ի հայտարարությունը [128]: Ավելի քան 70 տրիլիոն ԱՄՆ դոլար ակտիվներ կառավարող խոշոր բանկերը և ֆինանսական հաստատությունները խոստացել են մինչև 2030թ.-ն իրենց ակտիվներում կրճատել «ածխածնի պարունակությունը», իսկ մինչև 2050թ.-ն աշխատել Net Zero արտանետումների ուղղությամբ:

Ներդրումային պորտֆելներում ռիսկերը բացահայտելու և գնահատելու համար վճռորոշ գործոններ են նաև կլիմայի փոփոխությունը, մարդու իրավունքները և այլ խնդիրներ: ESG ներդրումներն ավելի հաճախ դիտվում են որպես պատշաճ շրջահայացության հիմնավորված պրակտիկայի շարունակություն: ESG ֆոնդեր միջոցների ռեկորդային ներհոսքի շնորհիվ Covid-19 համավարակն ամրապնդեց ESG ներդրումների ընկալումը: Ճգնաժամը բարձրացրել է ուշադրությունը ESG-ի «S» բաղադրիչի վրա՝ հաշվի առնելով աշխատողների առողջության և անվտանգության ռիսկերի վերացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համաշխարհային մատակարարման շղթաներում աշխատանքային պայմանները [129]:

Գ. ESG չափորոշիչներ և հաշվետվողականություն

Ինչպես արդեն նշվել է, գործարարության տարբեր միտումները խթանում են ESG նկատառումների համընդհանուր ընկալումը և ընդլայնումը: ESG շուկայի աճը նաև հանգեցրել է տեղեկատվության բացահայտման պահանջների և գնահատման ընթացակարգերի տարածմանը: Այս գործոնների վերաբերյալ ընկերությունների հաշվետվությունները կարող են լինել ոչ հետևողական և դժվար համեմատելի: Ավելին, բազմաթիվ առևտրային ընկերություններ այժմ առաջարկում են վերլուծության վրա հիմնված ESG տեղեկատվություն: Բարդությունը պայմանավորվում է երկրային կարգավորումների և վերահսկողության տարբերություններով, ինչպես նաև այնպիսի հարցերի իրավական մեկնաբանությամբ, ինչպիսին էականությունն է: Չափորոշիչների սահմանումը և բացահայտումները ներդաշնակեցնելու համար ներկայումս ձեռնարկվում են բազմաթիվ ջանքեր: Հատկապես կարևոր են հետևյալները [130].

- Կայուն զարգացման ոլորտում Հաշվապահական հաշվառման ստանդարտների խորհուրդը (The Sustainability Accounting Standards Board, SASB) չափորոշիչներ սահմանող անկախ կազմակերպություն է: Այն միավորվել է Միջազգային ինտեգրված հաշվետվությունների խորհրդի (The International Integrated Reporting Council, IIRC) հետ՝ ստեղծելով նոր կազմակերպություն, որը կոչվում է Արժեքների մասին հաշվետվության հիմնադրամ (Value Reporting Foundation): Վերջինս համագործակցում է այնպիսի կառույցների հետ, ինչպիսիք են Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնությունը (Global Reporting Initiative, GRI) և Կլիմայական բացահայտումների չափորոշիչների խորհուրդը (Climate Disclosure Standards Board, CDSB):
- Որոշ երկրներ ուսումնասիրում են ESG-ի չափորոշիչները և բացահայտման պահանջները: Օրինակ, ԵՄ-ը Ոչ ֆինանսական հաշվետվողականության մասին իր հրահանգը (Non-Financial Reporting Directive, NFRD) կփոխարինի Կորպորատիվ կենսակայունության հաշվետվողականության հրահանգով (Corporate Sustainability Reporting Directive, CSRD):
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (The International Financial Reporting Standards, IFRS) հիմնադրամը 2021թ.-ի նոյեմբերին Գլազգոյում COP26-ի շրջանակներում գործարկեց Կենսակայունության նոր ստանդարտների միջազգային խորհուրդը (International Sustainability Standards Board, ISSB): IFRS-ը սահմանում է հաշվապահական հաշվառման ստանդարտներ, որոնցով առաջնորդվում են բազմաթիվ երկրներ, իսկ ISSB-ը կհիմնվի գոյություն ունեցող ոչ ֆինանսական հաշվետվությունների շրջանակների վրա: ISSB-ի դերին աջակցում են այնպիսի խմբեր, ինչպիսիք են Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպությունը (International Organization of Securities Commissions, IOCSO), Համաշխարհային տնտեսական ֆորումի Միջազգային բիզնես խորհուրդը (World Economic Forum International Business Council, WEF IBC), ինչպես նաև առաջատար պրոֆեսիոնալ հաշվապահական ընկերությունները:

Ներդրողները, ընկերությունները և մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններն ուշադիր հետևում են այս զարգացումներին: Չնայած որ շրջանակը և ժամկետները կարող են փոխվել, նախապատրաստական գործընթացն ընթացքի մեջ է: Փոփոխությունների այս շրջանը կվերափոխի կորպորատիվ հաշվետվությունները, ինչպես նաև հաշվետվողականությունը գալիք տարիների համար: Այն նաև կարևոր հետևանքներ կունենա շահակիցների ներգրավվածության, երկարաժամկետ արժեքի ստեղծման և հասարակության կյանքում գործարար հատվածի ընդհանուր ներդրման հարցում [131]:

V. ԿԶՆ 16 և տրանսֆորմացիոն կառավարում

ՄԱԿ-ի Համաշխարհային պայմանագիրը (The UN Global Compact, UNGC) մշակել է ինչպես պատասխանատու գործարարության, այնպես էլ պատասխանատու ներդրումների միտումների վրա հիմնված նորարարական հայեցակարգ: Այն խարսխված է ԿԶՆ 16-ի և ESG պրակտիկայի վրա: Տրանսֆորմացիոն կառավարման այս նախաձեռնությունը նաև կապեր է սահմանում կորպորատիվ և հանրային կառավարումների միջև [132]: Որպես այդպիսին, այն արտացոլում է *Կառուցողական կապիտալի հայեցակարգի* հետ կապված մի քանի թեմաներ՝ ներառյալ *կառուցողական կապիտալի անկյունաքարերի* ամրապնդումը:

UNGC-ը օրենքի գերակայության և կառավարման հարցերը լուծում է *Խաղաղության, արդարադատության և ուժեղ ինստիտուտների գործողության հարթակի* միջոցով: Այս համատեղ ջանքերը համահունչ են UNGC-ի տասը սկզբունքներին և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, մասնավորապես՝ ԿԶՆ 16-ին: Այն օգնում է ընկերություններին բացահայտել գործարար ռիսկերն ու հնարավորությունները, շահակիցներին ներգրավվել երկխոսության մեջ քաղաքացիական հասարակության և այլ դերակատարների հետ, կիսվել լավագույն փորձով և դրսևորել առաջնորդություն: Ընկերությունների կողմից ընտրովի շահերի պաշտպանությունը՝ բիզնես գործընկերների և քաղաքացիական հասարակության դաշնակիցների հետ միասին, կարող է աջակցել կառուցողական կապիտալի հիմքերին՝ ի շահ տնտեսությունների և հասարակությունների: Գործողության հարթակը նաև լրացնում է «ընդհանուր տարածություն» մոտեցումը՝ աջակցելով օրենքի գերակայությանը, հաշվետու կառավարմանը և քաղաքացիական ազատություններին [133]:

2020թ.-ի սեպտեմբերին, ՄԱԿ-ի 75-ամյակի և Համաշխարհային պայմանագրի 20-րդ տարեդարձի առթիվ, UNGC-ը հրապարակեց «Գործարար առաջնորդների հայտարարությունը նորացված համաշխարհային համագործակցության մասին» [134]: 100-ից ավելի երկրների ավելի քան 1000 գլխավոր տնօրեններ հայտնեցին իրենց աջակցությունը Միավորված ազգերի կազմակերպությանն ու խաղաղության, արդարադատության և ուժեղ ինստիտուտների միջոցով համաշխարհային համագործակցությանը:

2021թ.-ի հունիսին մեկնարկած ՄԱԿ-ի Համաշխարհային պայմանագրի առաջնորդների գագաթնաժողովում ներկայացվեց *ԿԶՆ 16 գործարար հայեցակարգը՝ Ոգեշնչող տրանսֆորմացիոն կառավարումը*: Դրա հիմնական կետերն են.

- ԿԶՀ 16 գործարար հայեցակարգը կօգնի ընկերություններին ընդունել տրանսֆորմացիոն կառավարումը, սկզբունքների վրա հիմնված փիլիսոփայությունը, որը կոչ է անում բիզնեսին որպես պատասխանատու գործարար վարքագծի, ESG-ի կատարողականի կատարելագործման և պետական ինստիտուտների, օրենքների և համակարգերի ուժեղացման շարժիչ ուժ լինել ավելի հաշվետու, բարեվարք, ներառական և թափանցիկ:
- ESG-ի հարցերում աճող համընկնումների և հրատապության պայմաններում տրանսֆորմացիոն կառավարումը պրիզմա է, որի միջոցով ընկերությունները կարող են ընդլայնել իրենց պատկերացումները ESG-ի «G» բաղադրիչի մասին: Այն ցույց է տալիս, թե ինչու և ինչպես կարող են ձեռնարկությունները ներքին և արտաքին գործողությունների միջոցով գնահատել և իրականացնել ԿԶՀ 16-ի յուրաքանչյուր խնդիր, ներառյալ՝ մատակարարման ամբողջ շղթայի:

ԿԶՀ 16 գործարար հայեցակարգի նպատակը ոչ թե իրավական նոր պարտավորությունների կամ չափորոշիչների ստեղծումն է, այլ այս խնդիրների առաջխաղացման հարցում բիզնեսի դերի ըմբռնումն է: Հայեցակարգը կարող է ամրապնդել միջֆունկցիոնալ ներգրավվածությունը՝ միաժամանակ խրախուսելով ընկերություններին գնահատել իրենց իրավիճակը և բացահայտել բարելավման հնարավորությունները: Այն կարող է նաև օգնել ընկերություններին ներառել այդ հարցերը խորհրդի և ղեկավարության վերահսկողության, արժեքների և մշակույթի, ռազմավարությունների, քաղաքականությունների, գործառնությունների և հարաբերությունների շրջանակ: ԿԶՀ 16 գործարար հայեցակարգը ներկայումս տրամադրում է ընդարձակ առցանց ռեսուրս, որը ներկայացնում է ընկերությունների գործողությունների տասնյակ օրինակներ ինչպես կորպորատիվ կառավարման, այնպես էլ հանրային կառավարման վերաբերյալ [135]: Նման օրինակները կարող են օգնել *Կառուցողական կապիտալի հայեցակարգի* առաջխաղացմանը:

Եզրափակելով կարելի է նշել, որ արժեքներով առաջնորդվող մասնավոր հատվածը *Կառուցողական կապիտալի անկյունաքարերից* է, բայց այն նաև ծառայում է այլ անկյունաքարերի ամրապնդմանը: Այն ամենը, թե ինչպես է գործում բիզնեսը, ինչ մշակույթ է սերմանում և ինչպես է պահպանում հարաբերությունները, կարող է լինել աջակցության աղբյուր: Պատասխանատու գործարարության և ներդրումների միտումների մասին այս ակնարկն ընդգծում է կորպորատիվ կառավարման պրակտիկայի և ռիսկերի գնահատման բարելավումները, թափանցիկության և հաշվետվողականության նոր ընթացակարգերը, բազմակողմանի նախաձեռնություններում ավելի մեծ ներգրավվածությունը և զգալի ուշադրություն հատկացնում սոցիալական և կայունության հարցերի լայն շրջանակի: CIPE-ի բացահայտած հիմնական մարտահրավերներից է UNGP-ները և այլ միջազգային սկզբունքները զարգացող շուկաների միջին ընկերությունների համար գործուն քայլերի վերածելը: Ազդեցությունների վրա աճող ուշադրությունն էլ ավելի է մեծացնում ընկերություններից սպասումները, որոնք վերաբերում են հանձնառությունները ողջամիտ գործողություններին համապատասխանեցնելուն: Սա սկսվում է սեփական գործառնություններից և մատակարարման շղթայից: Միաժամանակ, ավելի լայն հասարակական նպատակներին աջակցելու համար ընկերություններն ունեն նոր հնարավորություններ՝ ստեղծելու բարենպաստ միջավայր շահութաբեր և կայուն գործարար մոդելների համար:

Մաս հինգերորդ. Կառուցողական կապիտալի հայեցակարգի առաջխաղացումը

Այս *զեկույցը* ներկայացնում է կառուցողական կապիտալի ամրապնդման և քայքայող կապիտալի զսպման վերաբերյալ բազմաթիվ գաղափարներ: Հինգերորդ մասը միավորում է *Կառուցողական կապիտալի հայեցակարգի առաջխաղացման մոտեցումները*:

Առաջին բաժինը, կենտրոնանալով իրազեկման վրա, ներկայացնում է կառուցողական կապիտալի համախոհների լայն շրջանակը: Երկրորդ բաժնում դիտարկվում են հիմնական շահակիցների հնարավոր գործողությունները: Երրորդ բաժնում լուսաբանվում են համագործակցության գործարար հնարավորությունները: Համակարգային փոփոխություններին միտված համագործակցությունը խթանելու նպատակով այս քայլերը փոխկապակցված են և շարունակական:

1. Կառուցողական կապիտալի վերաբերյալ իրազեկում

Քաղաքականությունների իրագործումը տեղի է ունենում վերևից ներքև կամ ներքևից վերև ուղղություններով: Ժամանակի ընթացքում *Կառուցողական կապիտալի հայեցակարգի* տարրերը կարող են ձեռք բերել իրավական ուժ, իսկ ներքին մակարդակում՝ դառնալ շահերի պաշտպանության միջոց: Որպես ելակետ՝ *Հայեցակարգը* պետք է հիմնվի տվյալ երկրի շահակիցների վրա, որոնք արդեն աշխատում են ներդրումների, բարեվարքության և ազդեցության հարցերի շուրջ: Սա կարող է լինել ազգային, ենթազգային կամ տեղական մակարդակով: Իդեալական խարիսխն ավելի ընդգրկուն գործարար համայնքն է, որը ներառում է բոլոր չափերի և ոլորտների ընկերություններ, ֆինանսական հաստատություններ, մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, հետազոտական և ուսումնական հաստատություններ, գործարար և առևտրային ասոցիացիաներ, բազմաշահառու գործընկերություններ և այլն: Դրանք կարող են օգնել կառուցողական կապիտալի առաջխաղացման համար միջավայր ձևավորելու հարցում:

Այս զեկույցում ընդգծվում է արժեքներով առաջնորդվող մասնավոր հատվածի կենսական դերը, ինչպես նաև պատասխանատու գործարարության ներդրումը: Օրինակ՝ առևտրի պալատներն առաջատար դիրքերում են նման լսարանի համախմբման հարցում: Կենսական նշանակություն կունենա ներդրումները խթանող գործակալությունների, նավահանգստային մարմինների և հատուկ առևտրային գոտիների կառավարիչների ներգրավումը: Տեղեկատվա-բացատրական աշխատանքը պետք է ներառի քաղաքացիական հասարակության և տեղական համայնքների ներկայացուցիչների: Հաշվի առնելով բազմազանության և ներառականության կարևորությունը՝ հատուկ ջանքեր պետք է գործադրվեն կանանց, փոքրամասնությունների և թերներկայացված այլ խմբերի մասնակցությունն ապահովելու համար: Կառուցողական կապիտալի այս լսարանը կարող է օգտագործվել իրազեկությունը բարձրացնելու և կառավարման ու հաշվետվողականության համակարգերի գնահատմանն աջակցելու համար: Սա նաև կենտրոնական դեր է խաղում արդյունավետ գործողությունների և լավագույն փորձի տարածման համար:

Ժամանակի ընթացքում շահակիցների իրազեկության բարձրացման գործընթացը կզարգանա: Հայեցակարգի ներդրման, երկխոսության խրախուսման և հաճախորդների ընդլայնման նպատակով կարելի է դիտարկել տեղական միջոցառումների անցկացման հնարավորությունը: Անկյունաքարերը կարող են ծառայել որպես հենակետ:

Կարելի է նաև առանձնացնել քայքայող կամ կառուցողական հետևանքներով ներդրումների կոնկրետ օրինակներ: Սա հետագայում կարող է հանգեցնել համատեղ գործողությունների ռազմավարության մշակման [136]:

II. Կառուցողական կապիտալի խթանմանը միտված գործողություններ

Շահակիցների ներգրավումը կիստակեցնի խնդիրների դասակարգումը և կօգնի բացահայտել գործողությունների առաջնահերթությունները: Հաշվի առնելով թվային նոր գործիքների առկայությունը՝ Կառուցողական կապիտալի հայեցակարգն առաջ մղելու տարբերակները պետք է խարսխվեն տվյալների վրա հիմնված մոտեցումների վրա: Դրանք կարող են ներառել շահակիցների և մատակարարման շղթայի քարտեզագրումը, ռիսկերի վերլուծությունը և սցենարների պլանավորումը, ապակողմնորոշման և ապատեղեկատվության գնահատումը, ինստիտուցիոնալ բարեվարքության չափանիշները, ծրագրերի մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունները: Օրինակ, ՏՀԶԿ-ը մշակել է «Բարեվարքության վերլուծություն. կոռուպցիայի և խարդախության ռիսկի գնահատումը բարելավելու համար տվյալների վրա հիմնված մոտեցումներ» ուղեցույցը [137]: Նման մոտեցումը կօգնի նաև կիրառել այս զեկույցի հիմքում ընկած «Ներդրումներ, բարեվարքություն, ազդեցություն» մոդելը:

Բացի այդ, Կառուցողական կապիտալի հայեցակարգի առաջխաղացումը պահանջում է ուշադրություն դարձնել աշխարհաքաղաքական մարտահրավերներին, ինչպես նաև հարակից ռիսկերին և արձագանքման միջոցներին: Նման մտահոգությունները վերաբերում են նաև համաշխարհային քաղաքական և տնտեսական կառավարման ապագայի վերաբերյալ ավելի ընդարձակ հարցերի շրջանակի: 2020թ.-ին լրացավ Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման 75-ամյակը: Այս կարևոր պահը կտրուկ սրեց համաշխարհային համագործակցության լարվածությունը և, ըստ էության, կանոնների վրա հիմնված միջազգային կարգի վրա ենթադրյալ հարձակումը: Նման զարգացումները ներառում են համաշխարհային կառավարման բարեփոխումները, սակայն դրանք կարող են նաև արդիական լինել տեղական խնդիրների լուծման համար: Ընդհանուր առմամբ, գնահատման գործընթացը պետք է ուղղված լինի գործողությունների տնտեսական և էթիկական հիմնավորումների բացահայտմանը՝ ապացուցելով կառուցողական կապիտալի անհրաժեշտությունը:

Ներդրումներն արագացնելու համար անհրաժեշտ է սահմանել շահակիցների կողմից կառուցողական կապիտալի կիրառման կոնկրետ գործողությունները: Որպես ելակետ՝ առաջարկվում են հետևյալները.

Կառավարություններ

- *Հայեցակարգն* ինտեգրել կառավարության ծրագրերի տարբեր ասպեկտներին և վերահսկողության ընթացակարգերին.
- Օրենքի գերակայության հանձնառությունների արդյունավետ ռազմավարությունների վերաբերյալ համագործակցել ներդրումները խրախուսող գործակալությունների հետ.
- Վերագնահատել ներդրումային պայմանագրերի ռեժիմները՝ հատկապես հաշվի առնելով տնտեսական կառավարման արդարացիության ներկա քննադատությունները [138].
- Չափումների և ազդեցության առնչությամբ չափումների, հենանիշերի հարցում կիրառել նորարարական մոտեցումներ [139].
- Կիրառել միջազգային ֆինանսական հաստատությունների և տնտեսական կառավարմամբ զբաղվող այլ գործակալությունների կողմից մշակված տվյալները, վերլուծությունները և գործիքները.
- Ապահովել տեղական իրավական ռեժիմների և ընթացակարգերի արդյունավետությունը բոլոր մակարդակներում, մասնավորապես ի հաշիվ թափանցիկության և հաշվետվողականության կառուցակարգերի.
- Բացահայտել գնումների գործընթացի տարբեր փուլերի թույլ կողմերը և ձեռնարկել անհրաժեշտ բարեփոխումները.
- Ընդլայնել ներգնա ներդրումների, հատկապես երկարաժամկետ ծրագրերի և ենթակառուցվածքների պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերը.
- Բարելավել կառավարության գործունեության ընդհանուր կատարողականի գնահատման գործընթացները [140]:

Գործարար և ֆինանսական հատված

- Գործարար բոլոր գործառնություններում և արժեշղթայում բարելավել թափանցիկությունը և պատշաճ շրջահայացության ընթացակարգերը.
- *Հայեցակարգն* ինտեգրել ներդրումների գնահատման և որոշումների կայացման գործընթացներին.
- Հետազոտել կայուն ներդրումների և ֆինանսավորման միտումների ազդեցությունը FDI-ների ռազմավարության և ESG գործոնների վրա.
- Ընդլայնել պորտֆելային ներդրումների առավելությունները՝ ներառյալ այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսիք Կայուն ֆոնդային բորսաներն են [141].
- Ընդլայնել չափումների կիրառումը, ազդեցության հետ կապված չափումներն ու կառավարումը.

- Դիտարկել կառուցողական կապիտալի անկյունաքարերին մասնավոր հատվածի աջակցության եղանակները՝ ուղղակի գործառնությունների, արժեշխանների և հավաքական գործողությունների միջոցով:

Բիզնես ասոցիացիաներ

- Կապիտալի անդրահամային հոսքերի և դրանց ազդեցության հարցերի շուրջ շահակիցների միջև ստեղծել երկխոսության հնարավորություններ՝ բարձրացնելով իրազեկությունը և խթանելով գործողությունները.
- Արձագանքել քաղաքականության համապատասխան փոփոխություններին և համակարգել բիզնեսի դիրքերը.
- Կիսվել պատասխանատու գործարար վարքագծի և ներդրողների հետ հարաբերությունների լավագույն փորձով.
- Բացահայտել կառուցողական կապիտալի հետ կապված ոլորտային խնդիրները.
- Բարելավել կորպորատիվ կառավարման, համապատասխանության, ռիսկերի գնահատման և հաշվետվողականության վերաբերյալ վերապատրաստումները.
- Խթանել ՓՄՁ-ների դերը՝ ներառյալ մատակարարման շղթաներում.
- Նպաստել տեղական տնտեսությունում բարեվարքության միջոցառումների ամրապնդմանը:

Քաղաքացիական հասարակություն

- Կառավարման բացերը վերացնելու համար կառավարությունների վրա դնել համապատասխան օրենքների և միջազգային չափորոշիչների կատարման համար պատասխանատվությունը.
- Համապատասխանության և շահակիցների ճնշումների միջոցով խթանել բիզնեսի հաշվետվողականությունը.
- Շարունակել կիրառել համաշխարհային քաղաքականությունների զարգացումները, օրինակ՝ ԿԶՆ 16-ը.
- Մշակել շահակիցների հետ փոխգործակցության և տեղեկատվության տարածման գործընթացներ.
- Սահմանել շահերի պաշտպանության արշավների առաջնահերթ ոլորտները՝ ներառյալ բազմազանությունը, հավասարությունը և ներառականությունը խթանելու համար:

Մասնագիտացված կառույցներ

- Բարձրացնել հաճախորդների վարքագծի չափանիշները. օրինակ՝ իրավաբանները գնահատում են իրենց ազդեցությունը բարեխղճության երաշխիքների վրա՝ հաշվի առնելով իրենց՝ որպես որոշակի հաճախորդների կամ նախագծերի խորհրդատուների դերը.

- Ամրապնդել համապատասխան իրավական ռեժիմները և հաշվետվողականության կառուցակարգերը, հատկապես՝ արտատարածքային չափումներ ունեցողները.
- Վերահսկել կարգավորման և հաշվետվողականության զարգացումներն այնպիսի թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են ESG չափորոշիչները և հաշվապահական պրակտիկան.
- Գիտելիքի փոխանակման նպատակով համագործակցել մասնագիտացված այլ կառույցների հետ.
- Շարունակաբար փոփոխվող խնդիրների վերաբերյալ, ինչպիսին կորպորատիվ կառավարումն է, ստեղծել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր:

Ուղեղային և ակադեմիական կենտրոններ

- Իրականացնել միջառարկայական հետազոտություններ՝ հիմնված տեսական և էմպիրիկ վերլուծությունների վրա.
- Հստակեցնել «կառուցողական կապիտալ» և «քայքայող կապիտալ» հասկացությունների էությունը և դրանց ազդեցությունները.
- Բացահայտել քաղաքականությունների բարեփոխումների հնարավոր ոլորտները.
- Կառավարման բացերը բացահայտելու համար ուսումնասիրել ներդրումային ծրագրերի քայքայող հետևանքները.
- Ուղղորդել Հայեցակարգի առաջխաղացմանը միտված գործնական քայլերը:

III. Շահակիցներին ներգրավման գործարար հնարավորություններ

Կառուցողական կապիտալի առաջխաղացմանը միտված գործողությունների համատեքստը և եղանակները շարունակաբար փոփոխվում են: Այստեղ դիտարկվում են մի շարք մշակումներ, որոնք կոչված են օգնել ընկերություններին՝ շահակիցների հետ գործակցության համար հնարավորություններ և առաջնահերթություններ ձևավորելու հարցում:

Ա. Կորպորատիվ նպատակի ազդեցությունը

Կառուցողական կապիտալից նաև աջակցություն ստանալու, նաև շահելու համար ընկերությունները պետք է ըմբռնեն պատասխանատու գործարարության օրակարգի զարգացման միտումները: Դրանցից մի քանիսը նշված են Չորրորդ գլխում: Բացի այդ, տարբեր նախաձեռնություններ ձգտում են հասարակական կյանքում վերաիմաստավորել ընկերությունների դերը: Հիմնական գաղափարներից է բիզնեսի հիմնարար նպատակի ըմբռնումը: 2019թ.-ին Բիզնես կլոր սեղանն իր 181 անդամների՝ ԱՄՆ-ի խոշոր կորպորացիաների համար գործադրեց ջանքեր՝ ընդունելու Հայտարարություն կորպորացիաների նպատակի վերաբերյալ [142]: Նրանք հայտարարեցին, որ ընկերությունները պետք է ծառայեն ոչ միայն իրենց բաժնետերերին և առավելագույնի հասցնեն դրանց եկամուտները, այլև հոգ տանեն իրենց շահակիցների համար և ձևավորեն սոցիալական օգուտ: Հայտարարությունն արժանացել է բացառիկ

ուշադրության: 2018թ.-ին Բրիտանական ակադեմիան մեկնարկեց կորպորացիաների ապագայի վերաբերյալ հավակնոտ հետազոտական և ներառական ծրագիր: Այն բիզնեսի նպատակը սահմանեց հետևյալ կերպ. «շահավետորեն լուծել մարդկանց և մոլորակի խնդիրները, այլ չօգտվել խնդիրներ ձևավորելուց» [143]: *Նպատակասլաց բիզնեսի վերաբերյալ Ակադեմիայի սկզբունքներն* ուսումնասիրում են հաշվետվողականությունը և դրա իրագործումը: Նման հանձնառության ստանձնման համար առանցքային բարեփոխումները վերաբերում են կորպորատիվ օրենսդրությանը և կարգավորումներին, սեփականությանը և կառավարմանը, չափումներին և կատարողականին, ֆինանսներին և ներդրումներին [144]: Ավելի լայն իմաստով, նպատակի վերաբերյալ հարցերը կապված են կապիտալիստական համակարգում բաժնետերերի և շահակիցների տեղի մասին բանավեճերի, ինչպես նաև համագործակցության և վստահության ձևավորման անհրաժեշտության հետ:

Բ. Խթաններ ESG ներդրումների համար

ESG ներդրումների միտումները կազդեն կառուցողական կապիտալին աջակցելու հնարավորությունների վրա: Այս խթանն արագանում է կայունության չափորոշիչների և հաշվետվողականության պահանջների ներդաշնակեցմամբ, ինչպես նաև մարդու իրավունքների և բնապահպանական պատշաճ ուսումնասիրության կանոնակարգերի ընդլայնմամբ: Ավելի մեծ թվով ներդրողներ կներգրավվեն, և ավելի շատ ընկերություններ կներառեն ESG խնդիրները իրենց ռազմավարությունների, գործառնությունների և կատարողականի առանցքային ցուցանիշների մեջ: Ներդրողների սպասումները բավարարելու համար խորհրդի պարտականությունները և ռիսկերի վերլուծությունը կշարունակվեն վերափոխվել: Այս տեղաշարժերը կհանգեցնեն ավելի համապարփակ տվյալների բազայի և վերլուծական գործիքների մշակմանը: Ուշադրության կենտրոնում են նաև երեք գործոններից յուրաքանչյուրը, ընդ որում՝ բացահայտված տարբեր խնդիրներն անհրաժեշտ է դիտարկել ESG պրիզմայի միջոցով: Ընդհանուր առմամբ, կառուցողական կապիտալի տեսանկյունից կբարելավվի և կապիտալի հոսքերի որակը, և գործարար վարքագիծը՝ քայքայող կապիտալի հոսքերը խափանող ավելի ընդգրկուն փոփոխությունների հեռանկարներով:

Անհրաժեշտ է հասկանալ, որ շահակիցների գոհունակությունը շահելու համար այլևս բավարար չէ հասարակության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները բացահայտելու, կանխելու և մեղմելու բազային մակարդակը: Երբ ընկերությունները չեն կարողանում բավական արագ իրագործել դրական փոփոխությունները, շահակիցները, այդ թվում՝ ներդրողները, կպահանջեն թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող իրավական պարտադիր մոտեցումներ: *Կառուցողական կապիտալի հայեցակարգն* առաջարկում է առավելություններ՝ խրախուսելով ընկերություններին կամավոր վարքականոնների միջոցով հետևել բարձր չափորոշիչների: Սա առաջնահերթ է համարում բոլոր դերակատարների թափանցիկությունը և հաշվետվողականությունը և հիմնվում է ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ հանրային հատվածի հետ ակտիվ փոխգործակցության վրա:

Գ. Քաղաքացիական հասարակության և գործարարության «ընդհանուր տարածք»

Քաղաքացիական հասարակության դերակատարները, ինչպես նաև ընկերությունները կախված են գործունեության «ընդհանուր տարածքը» սահմանող իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներից: Քաղաքացիական հասարակությունը չի կարող բարգավաճել, իսկ բիզնեսը՝ զարգանալ այդ շրջանակներից դուրս: Ինչպես նշված է *«Ընդհանուր տարածքը ճնշման տակ. բիզնեսն աջակցում է քաղաքացիական ազատություններին և իրավապաշտպաններին»* գեկույցում. «Հաջողակ կայուն բիզնեսը և ներդրումային միջավայրը պահանջում են օրենքի գերակայության վրա հիմնված հաշվետու կառավարում: Նման միջավայրը կարող է պահպանվել միայն այն դեպքում, երբ քաղաքացիական հասարակության ընդհանուր տարածքը որոշող իրավունքները՝ խոսքի, հավաքների և միավորումների ազատությունը, հարգված և պաշտպանված են» [145]: Այս տարրերը թույլ են տալիս իրացնել մարդու այլ իրավունքները: Բիզնեսի համար կարևոր է, որ դրանք նաև նորարարության և ձեռներեցության կենսական ուժեր են, ինչպես նաև արժեք ստեղծելու ազատության և տնտեսական շահույթի ու հանրային օգուտի աղբյուր: Որպես այդպիսին, այս մոտեցումը տեղին է կառուցողական կապիտալի համար՝ թե՛ նրա նպատակների և թե՛ գործողության եղանակների պատճառով:

Բիզնեսը երբեմն ընդունում է «ընդհանուր տարածքը» և կայուն բիզնեսի ու ներդրումային միջավայրի օգուտները: Այնուամենայնիվ, այս «ընդհանուր տարածքն» այժմ ճնշման տակ է ամբողջ աշխարհում: Իրավապաշտպանների վրա հարձակումներն ավելանում են. ավտոկրատ երկրները գործում են անպատիժ, և նույնիսկ որոշ հին ժողովրդավարներ հետընթաց են ապրում: Այս միտումների ֆոնին «ընդհանուր տարածքը» պաշտպանելու նպատակով տարբեր շահակիցներ կոչ են անում բիզնեսին միավորել ջանքերը քաղաքացիական հասարակության հետ: «Ընդհանուր տարածքի» կառուցվածքը կոչ է անում ընկերություններին լինել քաղաքացիական ազատությունների և մարդու իրավունքների պաշտպանների «ձայնն ու ուժը», երբ դրանք ուղղակիորեն կապված են ընկերությունների գործունեության և մատակարարման շղթայի հետ: Սա նաև մարտահրավեր է ընկերություններին՝ տեսնելու հնարավորություններ իրավիճակներում, որոնք անմիջականորեն չեն ազդում դրանց գործունեության վրա, սակայն վտանգում են «ընդհանուր տարածքը», որից կախված է և՛ բիզնեսը, և՛ քաղաքացիական հասարակությունը:

Մաս վեցերորդ. Եզրակացություն. փաստարկներ կառուցողական կապիտալի օգտին

Կառուցողական կապիտալի հայեցակարգի մշակումը բացահայտեց միմյանց լրացնող մի շարք թեմաներ: Այս հակիրճ եզրակացությունն ընդգծում է դրանցից մի քանիսը:

1. *Կառուցողական կապիտալի անկյունաքարերը* նպատակաուղղված են աջակցելու կառավարման վրա դրական ազդեցություն ունեցող կապիտալի հոսքերին և կասեցնելու բացասական ազդեցություն ունեցողները: Ներկայիս տնտեսական ծայրահեղ խափանումները, ինչպես նաև ԿՀՆ-ներին հասնելու ջանքերը կարող են ամրապնդել վստահությունն առ այն, որ ներդրումները կհասնեն իրենց նախանշած նպատակներին: Կայուն զարգացման օրակարգը, հատկապես ԿՀՆ 16-ը, տեղեկատվության աղբյուր է և ոգեշնչում է այս *Հայեցակարգի* շատ ասպեկտներ:
2. *Հայեցակարգը* հիմնվում է ինչպես տնտեսական փաստարկների, այնպես էլ ավելի լայն ժողովրդավարական արժեքների վրա: Այն ձգտում է ստեղծել երկարաժամկետ արժեք և ընկերությունների, և հասարակության համար: *Հայեցակարգը* նաև հստակորեն արտահայտում է բազմաթիվ արժեքներ և խթանում արժեքների վրա հիմնված մշակույթը:
3. *Հայեցակարգն* իրագործվում է տեղական մակարդակում, սակայն այն ձևավորվում է միջազգային քաղաքականության կառուցակարգերով և հիմնված է տնտեսական կառավարման համաշխարհային ինստիտուտների տվյալների վրա: Այն նաև ուշադիր է կորպորատիվ կառավարման և գլոբալ կառավարման փոխհարաբերությունների նկատմամբ: Իր հերթին *Հայեցակարգը* կարող է ազդեցություն ունենալ միջազգային մակարդակում:
4. Այս զեկույցում ներկայացված ռիսկի և կայունության մարտահրավերները արտացոլում են ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածի միջոցառումների շուրջ ծավալված բանավեճերը: Այնուամենայնիվ, ներկա հանգամանքները նաև ընդգծում են համակարգային ռիսկերի նշանակությունը, ինչպիսիք են համավարակների և կլիմայի փոփոխության սպառնալիքները: Սա մատնանշում է լրացուցիչ և համապարփակ համակարգերի վրա հիմնված ռազմավարություններին առաջնահերթություն տալու անհրաժեշտությունը:
5. Հետևանքներն ու ազդեցությունները, և ոչ թե ֆինանսական հոսքերը, որպես այդպիսին, ունեն կարևոր նշանակություն կառուցողական կապիտալը և քայքայող կապիտալն ըմբռնելու համար: Այդ իսկ պատճառով ազդեցության գնահատումները *Հայեցակարգի* իրագործման հիմքն են: Իրապես, բարձրանում է հետևյալ հարցը. ինչպիսին է տվյալ ներդրման ազդեցությունը համակարգային բարեվարքության վրա: Նման շեշտադրումը լրացնում է նաև տարբեր հաստատությունների և շահակիցների ազդեցության գնահատման ավելի ընդարձակ հետաքրքրությունը՝ առաջարկելով ազդեցության, նորարարության և առաջխաղացման լրացուցիչ ուղիներ:

6. Ընթացիկ ժամանակաշրջանը ստացել է «Մեծ վերականգնում» անվանումը: Սա բիզնեսի, կառավարության և հասարակության միջև հարաբերությունների այլ ընկալման հեռանկարներ է բացում: Գոյություն ունեն փոփոխությունների և ընդհանուր նպատակի նվաճման զգալի խթաններ: *Հայեցակարգն* արձագանքում է վերակազմավորման այս ժամանակաշրջանին՝ հենվելով ոլորտների, դերակատարների և երկրներ միջև նոր գործակցությունների վրա: Կա նաև մեկ այլ կարևոր հրամայական՝ վստահության վերականգնումը: *Հայեցակարգը* կախված է և նպաստում է ժողովրդավարության և շուկաների այդ էական բազմաչափ հատկանիշի ամրապնդմանը:
7. *Կառուցողական կապիտալի շրջանակը* կարող է էական դեր խաղալ ժողովրդավարության աշխուժացման կարևոր հարցում: Դրա համատեքստը, անկյունաքարերը և հայեցակարգերը հաստատում են հաշվետու կառավարման, անհատի ազատության և սոցիալական ու տնտեսական ինտեգրման իդեալները: Գործնական կիրառումը կախված է հանրության ակտիվ մասնակցությունից: Ավելին, կենսունակ և պատասխանատու գործարար հատվածը դրա հաջողության համար ունի առանցքային նշանակություն: *Հայեցակարգը* կարող է ցույց տալ, թե ինչպես են մասնավոր ձեռնարկությունները և ժողովրդավարական ինստիտուտներն աշխատում համատեղ արգասաբեր ժողովրդավարություն կառուցելու համար:

Այս թեմաներն ազդարարում են *Կառուցողական կապիտալի հայեցակարգի* հզոր ներուժի մասին: Անդրսահմանային կապիտալի հոսքերը կարող են աջակցող ուժ հանդիսանալ ինչպես հաշվետու ինստիտուտների, այնպես էլ պատասխանատու գործարար համայնքների համար: Նման ներդրումների հաջող արդյունքներն իրենց հերթին կամրապնդեն կառուցողական կապիտալի դիրքերը: Այժմ հրատապ անհրաժեշտություն կա առաջ շարժվել այս օրակարգով, քանի որ աշխարհը միտված է ավելի ճկուն և ներառական ապագայի կառուցմանը:

Այսօր, երբ ամբողջ աշխարհում ավտորիտար ազդեցությունները ձգտում են խարխլել ժողովրդավարական արժեքները, CIPE-ը համոզված է, որ կառուցողական կապիտալն առավել քան երբևէ կարևոր է: Ժողովրդավարության և շուկաների խաչմերուկում իր տասնամյակների գործունեության ընթացքում CIPE-ը տեսել է, թե ավտոկրատական ռեժիմների քայքայող ներդրումներն ինչ հեշտությամբ են կարողանում քայքայել հանրային վստահությունը, հատկապես զարգացող տնտեսություններում: CIPE-ը հուսով է, որ կառավարություններից, ընկերություններից, ասոցիացիաներից, քաղաքացիական հասարակությունից, մասնագիտական մարմիններից և ակադեմիական ցանցերից կազմված շահակիցների լայն շրջանակը կգրադվի այս զեկույցում ներկայացված գաղափարներով: Անհրաժեշտ բարեփոխումների և սկզբունքային գործողությունների միջոցով կապիտալի ծագման և նպատակակետ հանդիսացող երկրները կարող են նպաստավոր պայմաններ ձևավորել կառուցողական կապիտալի համար: Սա կարող է նաև օգնել մեղմել քայքայող ներդրումային հոսքերի բացասական հետևանքները: *Կառուցողական կապիտալի հայեցակարգը* կարող է ծառայել որպես արժեքավոր ռեսուրս տարբեր ոլորտների գործնական ռազմավարությունների համար:

CIPE-ի՝ նոր գործարկած Հաշվետու ներդրումների կենտրոնը (CAI) ժողովրդավարության և շուկաների հատման կետում առաջարկում է ինտելեկտուալ առաջնորդության նորարարական հնարավորություն: Այն միտված է բացահայտել և կատարելագործել կառուցողական և քայքայող կապիտալներին վերաբերող գործիքակազմն ու մեթոդաբանությունները, որոնք կարող են տեղակայվել CIPE-ի նախագծերի պորտֆելի շրջանակներում: CAI-ը հետապնդում է երկակի ռազմավարություն՝ գործնականում կիրառել *Կառուցողական կապիտալի հայեցակարգը*¹ ձգտելով մեծացնել կառուցողական կապիտալի հոսքերը և նվազեցնել քայքայող կապիտալի ազդեցությունը: Ողջ աշխարհում CIPE-ի տեղական գործընկերների հետ համագործակցությունը մշտապես բացահայտել է յուրահատուկ հեռանկարներ: CAI-ի միջոցով CIPE-ն իր գիտելիքներով ու փորձով կկիսվի համաշխարհային ժողովրդավարական համայնքի հետ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. CIPE Corrosive & Constructive Capital Initiative; <https://corrosiveconstructivecapital.cipe.org/>
2. Oxford Analytica Foundation; <https://www.oxan.com/foundation/>
3. Center for International Private Enterprise; <https://cipe.org/>
4. Oxford Analytica Foundation; <https://www.oxan.com/foundation/>
